

**Միքայել Միքայելյան  
Գաբրիել Միքայելյան**

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ  
ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ  
ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ  
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ձեռնարկ**

**ԵՐԵՎԱՆ**



**«ՆԱՀԱՊԵՏ» հրատարակչություն**

**2016**

ՀՏԳ- 338(07)  
ԳՄԴ- 65.05g7  
Մ 780

*Հրատարակվում է ԵՊՀ տնտեսագիտության ու կառավարման  
Ֆակուլտետի գիտական խորհրդի որոշման հիման վրա*

Գրախոսողներ՝

**Վ. Հ. Թորոյան,** *տ.գ.դ., պրոֆեսոր*

**Վ. Ե. Հովսեփյան** *տ.գ.թ., պրոֆեսոր*

**Գ. Կ. Պետրոսյան** *տ.գ.թ., դոցենտ*

### **Միքայելյան Մ.Վ., Միքայելյան Գ.Մ.**

Մ 780 Տնտեսական համակենտրոնացումները և դրանց գնահատման ու կարգավորման մեթոդաբանական հարցերը: Ուսումնամեթոդական ձեռնարկ /տ.գ.դ., պրոֆեսոր Մ.Վ. Միքայելյանի ընդհանուր խմբագրությամբ.- Եր.: Նահապետ 2016.- 80 էջ

Ուսումնամեթոդական ձեռնարկում ներկայացվել են տնտեսական համակենտրոնացումների էության, դրանց գնահատման և Եվրամիությունում ու Եվրասիական տնտեսական միությունում կարգավորման փորձը, ինչպես նաև տեստերի և խնդիրների միջոցով ուսուցանվում են կարգավորման մեթոդաբանական հարցերը:

Ձեռնարկը օգտակար կլինի տնտեսական մրցակցություն ու հակամենաշնորհային քաղաքականություն ուսումնասիրող ուսանողների, դասախոսների, գիտական հետազոտությամբ զբաղվողների, ինչպես նաև տնտեսական համակենտրոնացումները կարգավորող պետական մարմինների աշխատողների համար:

ՀՏԳ- 338(07)  
ԳՄԴ- 65.05g7

ISBN 978-9939-856-26-1

© Միքայելյան Մ., 2016  
© Միքայելյան Գ., 2016

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջարան .....	4
Տնտեսական համակենտրոնացումների էությունը և դրսևորման առանձնահատկությունները .....	7
Ապրանքային շուկայի համակենտրոնացման մակարդակի գնահատումը.....	11
Տնտեսական համակենտրոնացումների կարգավորման Եվրամիության փորձը.....	21
Տնտեսական համակենտրոնացումների կարգավորումը Եվրասիական տնտեսական միության երկրներում.....	28
Ապրանքային շուկաներում տնտեսական համակենտրոնացման մակադակների գնահատման և տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացումների թույլտվության հետ կապված խնդիրների լուծման օրինակներ.....	36
Տեստեր և խնդիրներ .....	47
Պատասխաններ և ցուցումներ .....	72
Գրականության ցանկ .....	78

## ԱՌԱՋԱԲԱՆ

19-րդ դարի վերջին (1889 թ. դեկտեմբերին) Շերմանի օրենքի ընդունումով ԱՄՆ-ում դրվեցին հակամենաշնորհային կարգավորման պետական քաղաքականության իրավական հիմքերը: Սակայն, գործնականում դրա կիրառությունը կյանքի կոչվեց միայն 20-րդ դարի սկզբից՝ ԱՄՆ 26-րդ նախագահ Թեոդոր Ռուզվելտի իշխանության տարիներին: Անցած դարի ընթացքում հակամենաշնորհային կարգավորման և մրցակցության պաշտպանության օրենսդրություն ընդունեցին աշխարհի 24 երկիր (ներառյալ բոլոր զարգացած երկրները): Ներկայումս նման օրենսդրություն ունեն աշխարհի ավելի քան 100 երկիր: Դեռ ավելին, հակամենաշնորհային կարգավորումը և մրցակցության պաշտպանությունը կարևորվել են միջպետական տնտեսական համագործակցությունների և կառույցների գործունեության շրջանակներում (Եվրամիություն, Հյուսիսամերիկյան ազատ առևտրի գոտու համաձայնագիր, Անկախ պետությունների համագործակցություն, Եվրասիական տնտեսական միություն և այլն): Այս ժամանակահատվածում զգալիորեն բարելավվել են մրցակցության պաշտպանության իրավական հիմքերը: Հստակեցվել են սպորանքային շուկաների վերլուծության մեթոդաբանությունը և կարգավորման գործիքները:

Հակամենաշնորհային կարգավորման և մրցակցության պաշտպանության գործընթացներում առանցքային տեղ է գրավում տնտեսական համակենտրոնացումների կարգավորումը, որի ժամանակ օգտագործվող սպորանքային շուկաների վերլուծության մեթոդաբանությունը կիրառելի է կարգավորման մյուս ուղղու-

թյունների (բացառությամբ՝ անբարեխիղճ մրցակցության) համար:

Հայաստանի Հանրապետությունը ավելի քան 15 տարի առաջ ընդունեց մրցակցության պաշտպանության օրենսդրությունը (2000թ. Նոյեմբերի 6-ին) և ՀՀ նախագահի հրամանագրով ձևավորվեց կարգավորող մարմինը՝ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (2001թ. Հունվարի 13-ին): Մրցակցության պաշտպանության վերաբերյալ որոշակի փորձ է կուտակվել: Անցած տարիների ընթացքում կարգավորող մարմինը համակենտրոնացումներին առնչվող տասնյակ գործեր է քննարկել, որոնց ընթացքում ի հայտ են եկել թե՛ օրենսդրական, և թե՛ ենթաօրենսդրական ու մեթոդաբանական բացթողումներ, որոնց լուծումը խիստ հրատապ է: Սույն աշխատանքի շրջանակում փորձ է արված դիտարկել տնտեսական համակենտրոնացումների գնահատման ու կարգավորման մեթոդաբանական հարցերը՝ հաշվի առնելով նաև միջազգային փորձը:

Ընթերցողի դատին ներկայացվող ուսումնամեթոդական ձեռնարկը, ինչպես և ուսումնամեթոդական բնույթի յուրաքանչյուր հրատարակված աշխատանք, կոչված չէ դրանում դիտարկված բոլոր հարցերին սպառիչ պատասխան տալ: Գործնականում հնարավոր են տարբեր իրավիճակներ, որոնք հեղինակների տեսադաշտից դուրս են մնացել: Այնուամենայնիվ, ձեռնարկը, մասնագիտական առումով, կարող է օգտակար լինել տնտեսագիտական բուհերի ուսանողների, դասախոսների, մրցակցության, մասնավորապես, տնտեսական համակենտրոնացումների հարցերով զբաղվող ասպիրանտների, գիտական աշխատողների և պետական կարգավորող մարմինների համար:

ՌԽումնական ձեռնարկը շարադրելիս հաշվի են առնվել Եվրամիության և Եվրասիական միության երկրների մրցակցության պաշտպանության օրենքների պահանջները 2014 թ.

Հունվարի 1-ի դրությամբ, ՀՀ օրենքների և ենթօրենսդրական ակտերի պահանջները՝ 2015թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ:

Ուսումնամեթոդական ձեռնարկը պատրաստվել է «ԵՊՀԵ հիմնադրամի տեսական և ընդհանուր տնտեսագիտության ամբիոնում: Հեղինակները շնորհակալությամբ կընդունեն աշխատանքի վերաբերյալ յուրաքանչյուր դիտողություն ու առաջարկ, և դրանք հաշվի կառնվեն հետագայում՝ ձեռնարկի նոր հրատարակության նախապատրաստության ժամանակ:

### **Ուսումնական ձեռնարկի հեղինակներ՝**

*տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Մ.Վ. Սիբայեյան (առաջաբան, գլուխներ I, II և V (համահեղինակ)),  
տնտեսագիտության թեկնածու Գ.Մ.Սիբայեյան (գլուխներ III, IV, V (համահեղինակ), VI և VI):*

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բրիտանական Կոլումբիայի համալսարանի Կոմերցիայի և տնտեսական վարչության ֆակուլտետի դոցենտ Ռ.Ս.Հեյմանի (Վանկուվեր, Կանադա) և Կոնկորդիայի համալսարանի Հասարակական և հանրային գործերի դպրոցի տնօրեն (Մոնրեալ, Կանադա) Դ.Ս.Շապիրոյի կազմած՝ արտադրական կազմակերպությունների մրցակցային իրավունքի և քաղաքականության տերմինների բառարանում համակենտրոնացումը բնութագրվում է որպես փոքր թվով խոշոր ֆիրմաների կամ ձեռնարկությունների կողմից տվյալ շուկայում ապրանքների վաճառքին վերաբերող տնտեսական տարածքի մեծ բաժնի գավթում<sup>1</sup>:

Ակադեմիկոս Լ.Ի. Աբալկինի խմբագրած տնտեսագիտական հանրագիտարանում համակենտրոնացումը բնութագրվում է որպես միևնույն ձեռքերում կամ միևնույն տեղում արտադրության, կապիտալի կենտրոնացում, շուկայում մեկ կամ մի քանի ֆիրմաների գերիշխում<sup>2</sup>:

Պետական ծառայության սիբիրյան ակադեմիայի «Պետական և մոնիցինգայալ կառավարման ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ի.Վ. Կնյազևայի կարծիքով, «Տնտեսական համակենտրոնացումը տնտեսական նշանակալից հայտանիշների կամ բնութագրիչների կենտրոնացումն է աննշան քանակի տնտեսավարող սուբյեկտների ձեռքերում (միավորների կամ տեղեկատվություն կրողների): Ընդ որում, կուտակվում են ինչպես նյութական, այնպես էլ ներկայացուցչական իշխանությունները»<sup>3</sup>:

Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի պրոֆեսոր Ռոբերտ Պինդայկի և Բերկլիի (Կալիֆոռնիա) համալսարանի

---

<sup>1</sup> Словарь терминов в области экономики производственных организаций, конкурентного права и политики, направленной на поощрение конкуренции /составлен Р.С.Хейман и Д.М.Шапиро, Париж, с. 16.

<sup>2</sup> Экономическая энциклопедия/ гл. ред. Л.И.Абалкин, М., 1999, с. 320.

<sup>3</sup> И.В. Князева, Процессы концентрации на товарных рынках и методы антимонопольного регулирования, Новосибирск, 2001, с.27.

պրոֆեսոր Դանիել Ռաբինֆելդի հեղինակած «Միկրոէկոնոմիկա» դասագրքում համակենտրոնացումը դիտվում է որպես շուկայական իշխանությունը որոշող գործոններից մեկը: Այն մի քանի ֆիրմաների կողմից շուկայի մեծ մասի տնօրինումն է<sup>4</sup>: Ինչպես երևում է տնտեսական համակենտրոնացման վերոհիշյալ բնութագրումներից, համակենտրոնացումը քիչ թվով սուբյեկտների ձեռքում շուկայական մեծ բաժնի (իշխանության) կենտրոնացումն է: Մի քանի ֆիրմայի ձեռքում շուկայի մեծ բաժնի կենտրոնացումը (շուկայի համակենտրոնացման աստիճանի բարձրացումը, որը օլիգոպոլիայի բնորոշ հայտանիշներից մեկն է) նպաստում է դրա մենաշնորհացմանը: Իսկ մենաշնորհը, ինչպես նաև ոչ կատարյալ մրցակցության շուկայական կառուցվածքները, բերում են ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործմանը և բաշխմանը: Դրանք, ապրանքի գինը սահմանային ծախսից բարձր սահմանելու հնարավորություն ունենալով, կրճատում են արտադրության ծավալը, վատացնում են որակական ցուցանիշները, վերջին հաշվով, բացասաբար են ազդում սպառողների բարեկեցության վրա:

Շուկայական իշխանության կենտրոնացումը առանձին ֆիրմաների ձեռքում կարող է տեղի ունենալ ինչպես դրանց ստացած շահույթները տվյալ շուկայում ներդնելու միջոցով, այնպես էլ այդ շուկայում գործող այլ ֆիրմաների միաձուլման, միացման (կլանման), ակտիվների (այդ թվում՝ բաժինների, փայերի) ձեռքբերման ուղիով: Համաշխարհային պրակտիկայում պետական կարգավորող մարմինները վերահսկում են այլ ֆիրմաների հետ միաձուլումները, միացումները և ակտիվների ձեռքբերումները: Իսկ շահույթների հաշվին հզորացող ֆիրմաների բաժինների ավելացումը ապրանքային շուկաներում կարգավորվում են անուղղակիորեն: Եթե դրանք գերիշխող դիրք ունենան (իսկ դա չի արգելվում), կվերահսկվեն կարգավորող պետական մարմինների կողմից՝ ելնելով գերիշխող դիրքի չարաշահումներ թույլ չտալու հասարակական պահանջից:

---

<sup>4</sup> Роберт С. Пиндайк, Даниэль Л. Рабинфельд, Микроэкономока, 5-ое международное издание, СПб., 2002, с.316.



Տարբեր երկրների մրցակցության պաշտպանության օրենսդրություններում որպես հորիզոնական տնտեսական համակենտրոնացումներ դիտարկվում են միաձուլումները, կլանումները (միացումները) և ակտիվների ու կանոնադրական կապիտալում ունեցած բաժինների (փայերի, ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի) ձեռքբերման միջոցով տնտեսավարող սուբյեկտների որոշումների կայացման նկատմամբ վերահսկողության սահմանումը<sup>5</sup>:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավաբանական անձանց միաձուլման դեպքում նրանցից յուրաքանչյուրի իրավունքները և պարտականություններն անցնում են նոր առաջացած իրավաբանական անձին<sup>6</sup>: Այսպես, օրինակ, Ա, Բ, և Գ ֆիրմաների միաձուլմամբ ստեղծվում է նոր՝ Դ ֆիրմա (Ա+Բ+ Գ ->Դ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն իրավաբանական անձն այլ իրավաբանական անձի միանալու դեպքում միացած իրավաբանական անձի (Բ-ի) իրավունքները և պարտականությունները անցնում են այն անձին (Ա-ին), որին միանում է՝ Ա + Բ -> Ա:

Տնտեսական համակենտրոնացումները ըստ շուկայական պատկանելության լինում են՝ հորիզոնական (որի մասնակիցները միևնույն ապրանքային շուկայում գործող ձեռնարկություններն են), ուղղահայաց (մասնակիցները տեխնոլոգիական հաջորդական շղթաներում գործող ձեռնարկություններն են, օրինակ, այլուր և հաց իրացնող ձեռնարկությունները, մատակարար և մանրածախ առևտրային ցանցի ձեռնարկությունները և այլն) և խառը (կոնգլոմերատ), որի մասնակիցները տարբեր՝ տեխնոլոգիական հաջորդական շղթաներում չգտնվող ձեռնարկություններն են (օրինակ, գինի և հեծանիվ իրացնող ֆիրմաները և այլն):

Մրցակցության համար առավել վտանգավոր է հորիզոնական համակենտրոնացումը, քանի որ հնարավորություն է տալիս շուկայում մեկ ֆիրմայի ձեռքում առավել մեծ իշխանություն կենտրոնացնել ու մեծացնել դրա և մնացած ֆիրմաների արտադրան-

---

<sup>5</sup> Տես, օրինակ, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի հոդված 8-ը:

<sup>6</sup> ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N 17 (50), 10 օգոստոսի 1998 թ.

քի թողարկման և գների սահմանման վերաբերյալ որոշումներ կայացնելու գործողությունները համակարգելու հնարավորությունը: Մյուս կողմից, հատկապես մասշտաբի դրական հատույցով ճյուղերում, հորիզոնական համակենտրոնացումը կարող է նպաստել արտադրությունը առավել արդյունավետ դարձնելուն և իրացման հնարավորությունները մեծացնելուն: Այն կնպաստի արտադրանքի ինքնարժեքի կրճատմանը, աշխատանքի արտադրողականության բարձրացմանը և արտադրանքի որակի բարելավմանը: Բացի այդ, համակենտրոնացումը կարող է չխաթարել մրցակցությունը, հատկապես այն շուկաներում, որոնցում մուտքի խոչընդոտներ չկան: Այդ պատճառով էլ պետության ու դրա հակամենաշնորհային մարմինների խնդիրն է՝ կանխել այն տնտեսական համակենտրոնացումները, որոնք կհանգեցնեն մրցակցության սահմանափակմանն ու տնտեսության մենաշնորհացմանը, և ընդհակառակը՝ խրախուսել այն համակենտրոնացումները, որոնք կնպաստեն առողջ մրցակցության զարգացմանը:

### ***Հարցեր կրկնության համար***

1. Ի՞նչ է տնտեսական համակենտրոնացումը:
2. Որո՞նք են տնտեսական համակենտրոնացման ուղիները:
3. Որո՞նք են հորիզոնական համակենտրոնացումները:
4. Որո՞նք են ուղղահայաց համակենտրոնացումները:
5. Որո՞նք են խառը համակենտրոնացումները:
6. Ի՞նչ է սուբյեկտների միաձուլումը:
7. Ի՞նչ է սուբյեկտների (միացումը) կլանումը:
8. Ինչպե՞ս է դրսևորվում ակտիվների ձեռքբերումը:
9. Որո՞նք են տնտեսական համակենտրոնացման տեսակները:
10. Մրցակցության համար համակենտրոնացման ո՞ր տեսակներն են առավել վտանգավոր:
11. Ի՞նչ է շուկայի համակենտրոնացման աստիճանի բարձրացումը:
12. Որո՞նք են տնտեսական համակենտրոնացման հանգեցնող գործարքները:

## ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ապրանքային շուկաների վերլուծության ժամանակ կարևոր նշանակություն ունի այդ շուկայի համակենտրոնացման մակարդակի որոշումը: Այն պատկերացում է տալիս դրանում գործող տնտեսվարող սուբյեկտների շուկայական իշխանության ներուժի մասին:

Տնտեսագիտական գրականության մեջ և, այսպես կոչված, հակամենաշնորհային կարգավորման միջազգային պրակտիկայում շուկայի համակենտրոնացման աստիճանը որոշվում է մի շարք ցուցանիշների օգնությամբ<sup>7</sup>: Դրանցից են՝ համակենտրոնացման գործակիցը, Էնտրոպիայի գործակիցը, ֆիրմաների շուկայական բաժինների լոգարիթմների դիսպերսիաների գործակիցը, Լերների գործակիցը, Ջինի գործակիցը, Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսը, Լինդի ինդեքսը, Հոլլ-Տայդմանի (Ռ-ոգենբլյուտի) ինդեքսը և այլն: Ա.Գ.Սվետունկովը և Ա.Ա. Լիտվինովը այդ ցուցանիշները բաժանել են երկու խմբի՝ ուղղակի ցուցանիշներ, որոնց մեծությունը անմիջապես ցույց է տալիս ֆիրմայի ազդեցության անմիջական աստիճանը շուկայի վրա և անուղղակի ցուցանիշներ, որոնք բնութագրում են շուկայական իրավիճակն ամբողջությամբ: Ուղղակի ցուցանիշներից են Բեյնի, Տորինի և Լերների ինդեքսները: Անուղղակիներից են՝ շուկայական համակենտրոնացման գործակիցը, Հերֆենդալ-Հիրշմանի, Հոլլ-Տայդմանի, Լինդի ինդեքսները, Էնտրոպիայի գործակիցը, շուկայական բաժինների լոգարիթմների դիսպերսիաների գործակիցը և այլն<sup>8</sup>: Այս ցուցանիշներից ամենատարածվածները շուկայական համակենտրոնացման գործակիցը (CR) և Հերֆենդալ-Հիրշմանի (HHI) ինդեքսն են:

Շուկայական համակենտրոնացման գործակիցը որոշվում է հետևյալ բանաձևով.

---

<sup>7</sup> Տե՛ս. Яковлев А., Статистическая оценка уровня монополизации производства, Вестник статистики, 1990, N 9.

<sup>8</sup> Տե՛ս. Светульников С.Г., Литвинов А.А. Конкуренция и предпринимательские решения. – Ульяновск, 2000, с. 88:

$$CR_k = \sum_{i=1}^k q_i,$$

որտեղ  $CR_k$ -ն որևէ ապրանքային շուկայում  $k$  թվով ամենախոշոր իրացման ծավալ ունեցող տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման գործակիցն է,  $q_i$ -ն  $i$ -րդ տնտեսվարող սուբյեկտի ապրանքի իրացման բաժինն է՝ շուկայի ընդհանուր ծավալի մեջ: Գործնականում ավելի հաճախ օգտագործվում են երեք ( $CR_3$ ), չորս ( $CR_4$ ), վեց ( $CR_6$ ), ութ ( $CR_8$ ), տասը ( $CR_{10}$ ), քսանհինգ ( $CR_{25}$ ) խոշոր տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման մակարդակները բնութագրող ցուցանիշները:

Ռուսաստանի Գաշնությունում շուկաների համակենտրոնացման մակարդակը որոշելիս կիրառվում են վերոնշյալ թվաքանակով խոշոր սուբյեկտների ցուցանիշները<sup>9</sup>: ԱՄՆ-ի և Ֆրանսիայի ազգային վիճակագրությունները հաշվարկում են շուկայում 4, 8, 20, 50 և 100 խոշոր սուբյեկտների, Գերմանիայում, Անգլիայում և Կանադայում՝ 3, 6, 10 առաջատար ընկերությունների ցուցանիշները<sup>10</sup>: 80-ական թվականների կեսերից համակենտրոնացման գործակիցը սկսեց հաշվարկվել նաև Արևելյան Եվրոպայի երկրներում, 90-ական թվականների կեսերից՝ նաև ԱՊՀ երկրներում: Ապրանքային փոքր շուկաներ (աշխարհագրական փոքր տարածքներ) ունեցող երկրներում (նկատի ունենալով, որ դրանք հիմնականում օլիգոպոլացված շուկաներ ունեն) նպատակահարմար կլինի հաշվարկել 3 և 4 առաջատար տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման գործակիցները:

ԱՄՆ-ում շուկայի համակենտրոնացման աստիճանը գնահատելու համար 1968 թվականից օգտագործվել է համակենտրոնացման գործակիցը: Միաժամանակ, այն գործածվել է համակենտրոնացումների թույլտվություն տալու պարագայում: Եթե  $CR_4$ -ը գերազանցել է 75 տոկոսը, ապա սահմանափակումներ են մտցվել միաձուլումների նկատմամբ<sup>11</sup>:

<sup>9</sup> Порядок проведения анализа и оценки состояния конкурентной среды на товарных рынках, Утвержден приказом ГКАП России от 20.12.1996, N 169 (в ред. приказа МАП РФ от 11.03.1999, N, 71).

<sup>10</sup> Азов Г.Л., Конкуренция: Анализ, стратегия и практика, книга 3, М., 1996, с.39.

<sup>11</sup> Конкуренция и антимонопольное регулирование: Учебное пособие для вузов /подред. А.Г.Циганова/, М.: Логос, 1999, с.73.

Համակենտրոնացման գործակցի էական թերությունն այն է, որ այդ գործակիցը բացարձակապես զգայուն չէ շուկայում առաջատար ձեռնարկությունների բաժինների բաշխվածության նկատմամբ<sup>12</sup>: Հաշվարկները ցույց են տալիս, որ այդ ցուցանիշը նույնը կլինի, եթե, օրինակ, շուկայում առաջին չորս առաջատարներն ունենան 20-ական տոկոս բաժին, կամ առաջինն ունենա 75 տոկոս, հաջորդ երեքը միասին՝ 5 տոկոս: Ուրիշ օրինակ, առաջին երեք առաջատարներն ունենան 25-ական տոկոս կամ առաջինն ունենա 60 տոկոս, հաջորդ երկուսը միասին՝ 15 տոկոս: Գ.Լ.Ազոևի կարծիքով նույնպես համակենտրոնացման գործակցի էական թերությունը շուկայում սնտեսվարող սուբյեկտների բաժինների բաշխվածության այլ տարբերակների նկատմամբ անզգայությունն է<sup>13</sup>:

Շուկայում համակենտրոնացման աստիճանի որոշման վերոհիշյալ թերություններից գերծ է Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսը (HHI): Այն հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$HHI = \sum_{i=1}^n S_i^2,$$

որտեղ  $S_{i-g}$ ,  $i$ -րդ սնտեսվարող սուբյեկտի բաժինն է (տոկոսներով) շուկայի իրացման ընդհանուր ծավալում:

$$HHI \leq 10000$$

Որքան մեծ է այդ ինդեքսի մեծությունը, այնքան ավելի մեծ շուկայական իշխանությամբ են օժտված տվյալ շուկայում գործող խոշոր սնտեսվարող սուբյեկտները: Այս ինդեքսը միաժամանակ ցույց է տալիս, թե շուկայում ինչ տեղ են գրավում առավել մանր սնտեսվարող սուբյեկտները: Արդյոք դրանք հնարավորություն ունե՞ն շուկայական իշխանությամբ օժտված սնտեսվարող սուբյեկտների հետ մրցակցելու: Այս ցուցանիշի թերություններից մեկն այն է, որ հաշվարկելիս նկատի են առնվում բոլոր սնտեսվարող սուբյեկտների բաժինները: Իսկ դրանց թիվը

<sup>12</sup> Светунков С.Г., Литвинов А.А., *նշվ. աշխ.*, էջ 92.

<sup>13</sup> Азоев Г.Л., Челенков А.П., *Конкурентные преимущества фирмы, М., «Новости», 2000, с.93.*

գործնականում կարող է շատ մեծ լինել և դժվարություններ առաջացնել: Այդ պատճառով, վերցվում են շուկայում առաջատար առաջին 50 ձեռնարկությունների ցուցանիշները<sup>14</sup>:

Այս ցուցանիշի քննադատները նշում են նաև այն հանգամանքը, որ ձեռնարկությունների շուկայական բաժինները քառակուսի բարձրացնելիս այդ ինդեքսի վրա դրանք «գերազանահատող» ազդեցություն են թողնում: Այսպես, եթե չորս ձեռնարկություններից մեկի շուկայական բաժինը 40 տոկոս է, իսկ մնացած երեքից յուրաքանչյուրինը կազմում է 20-ական տոկոս, ապա  $HHI=40^2+3\cdot 20^2=2800$ : Արդյունքը՝ ինդեքսի կառուցվածքում գերիշխող ձեռնարկությունը կստանա 57 տոկոս բաժին՝ իրականում ունենալով 40 տոկոս շուկայական բաժին<sup>15</sup>: Հնարավոր է նաև հակառակ իրավիճակը: Համեմատենք երկու շուկաների ինդեքսները, որոնցից մեկը ներկայացված է չորս ձեռնարկություններով, յուրաքանչյուրը՝ 25-ական տոկոս շուկայական բաժիններով, իսկ մյուսում՝ մեկը՝ 40 տոկոս, երեքը՝ 10-ական տոկոս, և վեցը՝ 5-ական տոկոս շուկայական բաժիններով: Առաջին դեպքում՝  $HHI=2500$ , երկրորդ դեպքում՝ 2050<sup>16</sup>:

Ինչպես տեսնում ենք, շուկայում քիչ թվով մասնակիցների առկայության պարագայում այդ ինդեքսն ավելի մեծ արժեք է ձեռք բերում, քան ավելի շատ մասնակիցների դեպքում (թեկուզ և դրանցից մեկը ակնհայտ գերիշխող դիրք ունի): Իսկ աշխարհագրական փոքր տարածք ունեցող երկրներում ապրանքային շուկաները հիմնականում աչքի են ընկնում մասնակիցների փոքր թվով:

Հերֆեդալ-Հիրշմանի ինդեքսը առավել մեծ կիրառություն ունի ԱՄՆ-ում, որի հակատրեստային մարմինները (Առևտրի ֆեդերալ հանձնաժողովը և Արդարադատության նախարարության հակատրեստային դեպարտամենտը) 1982 թվականից այն օգտագործում են միաձուլումները թույլատրելու համար վերլուծություն կատարելու ժամանակ:

---

<sup>14</sup> Светуников С.Г., Литвинов А. А., նշվ. աշխ. էջ 92:

<sup>15</sup> Гальперин В.М., Игнатъев С.М., Моргунов В.И., Микроэкономика, т. 2, СПб., 1999, с.171-172.

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 172:

Եթե  $HHI < 1000$  շուկան համարվում է ցածր համակենտրոնացված, որպես կանոն, միաձուլումը թույլատրվում է: Եթե  $1000 < HHI < 1800$ , շուկան համարվում է չափավոր համակենտրոնացված: Բայց եթե  $HHI > 1400$ , ապա համարվում է «բազմաքանակությանը սպառնացող»:

Այդ դեպքում Արդարադատության նախարարության հակատրեստային դեպարտամենտը լրացուցիչ ստուգում է միաձուլման հնարավորությունը: Եթե  $HHI > 1800$ , շուկան համարվում է բարձր համակենտրոնացված կամ «ոչ բազմաքանակ»: Եթե միաձուլման հետևանքով  $HHI$ -ն մեծանում է մինչև 50 կետով, ապա համակենտրոնացումը թույլատրվում է: Եթե  $HHI$ -ը ավելանում է ավելի քան 100 կետով, ապա միաձուլումը արգելվում է: Իսկ եթե Հերֆեյնդալ-Հիրշմանի ինդեքսն ավելանում է 51-100 կետով, ապա լրացուցիչ կերպով ուսումնասիրվում է միաձուլման հնարավորությունը<sup>17</sup>: Արդարադատության նախարարության հակատրեստային դեպարտամենտը 1984թ. ճշգրտեց այդ կանոնը: Միաձուլումների գնահատման համար լրացուցիչ պայման մտցվեց: Այն է՝ շուկայում մեկ տոկոսից ոչ պակաս բաժին ունեցող ֆիրմաների միաձուլում գերիշխող ֆիրմային թույլատրվում է, եթե այն չի հանգեցնում 35 տոկոսից ավել բաժնի<sup>18</sup>:

ԱՊՀ երկրների հակամենաշնորհային քաղաքականության միջգերատեսչական խորհրդի կողմից հաստատված «Տնտեսական համակենտրոնացման նկատմամբ պետական հսկողության մոդելային մեթոդական ցուցումներում» (այսուհետև՝ Մոդելային մեթոդական ցուցումներ) առաջարկվում է օգտագործել երկմակարդակ գնահատող սանդղակ, որի համաձայն, համակենտրոնացման գործակցի ( $CR_k$ ) և Հերֆեյնդալ-Հիրշմանի ինդեքսի հիման վրա շուկաները բաժանվում են երեք խմբի.

- 1) Բարձր համակենտրոնացված շուկաներ,  
երբ  $70\% < CR-3 < 100\%$   
 $2000 < HHI < 10000$

---

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 171:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 172:

կամ  $80\% < CR-4 < 100\%$

$1800 < HHI < 10000$

2) համակենտրոնացման միջին մակարդակ ունեցող շուկաներ,

երբ  $45\% < CR-3 < 70\%$

$1000 < HHI < 2000$

կամ  $45\% < CR-4 < 80\%$

$1000 < HHI < 1800$

3) ցածր համակենտրոնացված կամ համակենտրոնացման ցածր մակարդակ ունեցող շուկաներ,

երբ  $CR-3 < 45\%$

կամ  $CR-4 < 45\%$

$HHI < 1000$

Շուկայական համակենտրոնացման ցուցանիշները թույլ են տալիս գնահատել շուկայի մենաշնորհացման աստիճանը:

ԱՊՀ երկրների Մոդելային մեթոդական ցուցումներում առաջարկվում է հաշվել շուկայի մենաշնորհացման աստիճանը (մակարդակը): Այն ներկայացնում է մենաշնորհ կազմավորումների համատեղ բաժինը (MR)

$$MR = \sum_{i=1}^n (Pm)_i,$$

որտեղ  $(Pm)_i$ -ն մենաշնորհ (գերիշխող-Մ.Մ.) դիրք ունեցող  $i$ -րդ տնտեսվարող սուբյեկտների բաժինն է (տոկոսներով) տվյալ շուկայում,  $n$ -ը այդ շուկայում մենաշնորհ կազմավորումների քանակությունն է:

ԱՊՀ երկրների օրենսդրությունների համաձայն, գործնականում  $n$ -ը կարող է 1-ը կամ 2-ը լինել, առանձին դեպքերում՝ նաև 3-ը (օրինակ, Հայաստանում): Այն բնութագրում է գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների համատեղ շուկայական իշխանությունը: Նման շուկաներում, որպես կանոն, (եթե  $n \geq 2$ ) սուբյեկտներից յուրաքանչյուրը, առանձին վերցրած, շուկայական իշխանություն չունի այնքան ժամանակ, քանի դեռ այդ երկու տնտեսվարող սուբյեկտները համաձայնության չեն եկել: Նույնը տեղի կունենա դուռապոլիստական շուկայի պարագայում:



Տնտեսագիտական գրականության մեջ շուկայական իշխանության գնահատման ցուցանիշներից մեկը Լերների ինդեքսի<sup>19</sup> որոշումն է.

$$L=(P-MC) / P ,$$

որտեղ P-ն գինն է, MC-ն՝ արտադրության սահմանային ծախքերը:

Որքան շատ է գինը շեղվում սահմանային ծախքերից, այնքան Լերների ինդեքսը մեծ կլինի: Մրցակցային (զուտ) շուկայի դեպքում սահմանային ծախքը հավասարվում է գնին, հետևաբար, Լերների ինդեքսը դառնում է զրո: Այսինքն, զուտ մրցակցային շուկայում շուկայական իշխանություն ունեցող տնտեսվարող սուբյեկտ գոյություն չունի:

Լերների ինդեքսի գրոյական արժեքի դեպքում զուտ մրցակցային շուկայում ֆիրմայի շահույթը զրո արժեք կստանա, եթե ընդհանուր միջին ծախքերը հավասարվեն սահմանային ծախքերին:


Լերների ինդեքսի դրական մեծությունը վկայում է շուկայական իշխանության առկայության մասին:

Այս ցուցանիշը մենաշնորհի մրցակցային շուկայի համար գտնվում է 0.3-0.5 հատվածում, օլիգոպոլ շուկայի համար՝ 0.6-0.8 միջակայքում՝ կախված ֆիրմաների թվից (որքան քիչ են, այնքան Լերների ինդեքսը մեծ կլինի), գերիշխող դիրք ունեցող շուկայում՝ 0.8-0.9, իսկ մենաշնորհի դեպքում մոտենում է 1-ին<sup>20</sup>:

Գործնականում Լերների ինդեքսի կիրառումը որոշակի դժվարությունների հետ է կապված՝ սահմանային ծախքերի վերաբերյալ թվային տվյալներ վերցնելու դժվարությամբ պայմանավորված: Նկատի ունենալով, որ երկարատև ժամանակահատվածում սահմանային ծախքերը հավասարվում են միջին ծախքերին, Մոդելային մեթոդական ցուցումներում առաջարկվում է սահմանային ծախքերի փոխարեն օգտագործել արտադրական ընդհանուր միջին ծախքերը: Հետևաբար, այդ ինդեքսի համարիչում կարելի է վերցնել միավոր ապրանքի իրացումից ստացված շահույթը:

<sup>19</sup> Экономическая энциклопедия/гл. Ред. Л.И.Абалкин, М., 1999, с. 336.

<sup>20</sup> Конкуренция и антимонопольное регулирование: Учебное пособие для вузов, под ред. А.Г. Цыганова, М.,1999, с.70.



Գծապատկեր 1. Երկարատև ժամանակահատվածում արտադրական ընդհանուր միջին ծախսը, սահմանային ծախսը և գինը<sup>21</sup>:

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից աճող և նվազող հատույցով ճյուղերում միջին ծախսի և սահմանային ծախսի հավասարության դեպքում շահույթը զրո արժեք է ստանում:

Այսպիսով, ապրանքային շուկաներում համակենտրոնացման մակարդակի գնահատման վերոհիշյալ ցուցանիշներից յուրաքանչյուրը, առանձին վերցրած, թերություններ ունի: Երբեմն դրանք կարող են աղավաղված պատկերացում տալ համակենտրոնացման մակարդակի վերաբերյալ: Այդ պատճառով էլ ճիշտ կլինի, ինչպես առաջարկվում է Մոդելային մեթոդական ցուցումներում, այդ ցուցանիշները համալիր կերպով օգտագործել:

Հայաստանում այդ ցուցանիշների պարտադիր կիրառման վերաբերյալ ներկայումս գործող իրավական ակտ դեռևս չկա: Սակայն այդ ցուցանիշների մի մասը ապրանքային շուկաների վերլուծության ժամանակ օգտագործվել է ինչպես ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով), այնպես էլ առանձին հետազոտողների կողմից<sup>22</sup>:

<sup>21</sup> P.M.Нуреев, Курс Микроэкономики: Учебник для вузов, 2-е изд-ие, М., 2002, с.222.

<sup>22</sup> Տես, օրինակ, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2001թ. գործունեության հաշվետվություն, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2002թ. տարեկան գործունեության ծրագիր, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի պաշտոնական տեղեկագիր

Հայաստանի մրցակցային օրենսդրությունում կարգավորված չէ նաև համակենտրոնացումների թույլտվության չափանիշների կիրառման հարցը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանրապետության ապրանքային շուկաների զգալի մասը, ինչպես բնորոշ է տարածքով փոքր երկրներին, խմբիչխանական (օլիգոպոլ) կառուցվածք ունի:

Իսկ այդպիսի շուկաներում համակենտրոնացումների հետևանքով ֆիրմաները կարող են ձեռք բերել այնպիսի շուկայական իշխանություն, որը թույլ կտա նրանց «ազդեհիվ» վարքագիծ դրսևորել: Այդ պատճառով կարևոր նշանակություն ունի ապրանքային շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտների շուկայական իշխանության գնահատումը: Նման գնահատականը կարգավորող մարմնին հնարավորություն կտա կողմնորոշվելու՝ թույլատրել կամ չթույլատրել համակենտրոնացումը: Առավել ևս, որ համակենտրոնացման բարձր մակարդակ ունեցող շուկաների առկայությունը դեռ չի նշանակում, թե դրանցում գործող տնտեսվարող սուբյեկտները շուկայական մեծ իշխանությամբ են օժտված և ցանկության դեպքում կարող են չարաշահել այդ դիրքը<sup>23</sup>:

---

2002, N1, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2003թ. տարեկան գործունեության ծրագիր, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի պաշտոնական տեղեկագիր 2002, N1(2): Микаел Микаелян, Конкурентная политика в Армении, Международный журнал , Проблемы теории и практики управления, 2004, N3.

<sup>23</sup> «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն, տնտեսվարող սուբյեկտը գերիշխող դիրք ունի, եթե որպես իրացնող կամ ձեռքբերող իրացման կամ ձեռքբերման ծավալներով գրավում է տվյալ շուկայի առնվազն մեկ երրորդը, կամ ապրանքային շուկայում իրացման կամ ձեռքբերման առավել մեծ ծավալներ ունեցող երկու տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք, որպես իրացնող կամ ձեռքբերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը, կամ ապրանքային շուկայում իրացման կամ ձեռքբերման առավել մեծ ծավալներ ունեցող երեք տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք, որպես իրացնող կամ ձեռքբերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն երկու երրորդը:

Այսպիսով, ապրանքային շուկաների համակենտրոնացման աստիճանների որոշման ժամանակ հարկավոր է հաշվի առնել նաև երկրների աշխարհագրական տարածքների և դրանցով պայմանավորված ապրանքային շուկաների մեծությունը: Նման շուկաների վերլուծության ժամանակ գործնականում օգտագործվում են, ինչպես համակենտրոնացման գործակիցները, այնպես էլ Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսը:

Հարցեր կրկնության համար

1. Ի՞նչ ցուցանիշներով է գնահատվում ապրանքային շուկայի տնտեսական համակենտրոնացման մակարդակը:
2. Որո՞նք են ապրանքային շուկայի համակենտրոնացման գնահատման առավել կիրառական ցուցանիշները:
3. Ինչպե՞ս է հաշվարկվում համակենտրոնացման գործակիցը:
4. Ի՞նչ թերություններ ունի համակենտրոնացման գործակիցը:
5. Ինչպե՞ս է հաշվարկվում Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսը:
6. Ի՞նչ թերություն ունի Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսը:
7. Ինչպե՞ս է որոշվում շուկայի մենաշնորհացման աստիճանը (մակարդակը):
8. Ի՞նչ է բնութագրում Լերների ինդեքսը:
9. Շուկայական իշխանության որոշման ի՞նչ ցուցանիշ կարող եք նշել:
10. Ըստ համակենտրոնացման մակարդակի ինչպե՞ս են դասակարգվում ապրանքային շուկաները:
11. Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսի  $n^{\circ}$ ր մեծությունն է ընկած ԱՄՆ-ում շուկայի համակենտրոնացման բարձր մակարդակի գնահատման հիմքում:
12. ԱՄՆ-ում տնտեսական համակենտրոնացման գնահատման ժամանակ մինչև ե՞րբ է հաշվարկվել համակենտրոնացման գործակիցը:
13. ԱՄՆ-ում  $n^{\circ}$ ր դեպքերում են միաձուլումներն արգելվում:
14. Հայաստանում  $n^{\circ}$ ր ցուցանիշն է օրենսդրությամբ համակենտրոնացման մակարդակը բնութագրողը:

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԸ

Եվրամիությունում մրցակցության կարգավորման սկզբունքային շատ նորմեր սկիզբ են առել դեռևս 1951 թվականի ապրիլի 18-ին Փարիզում ստորագրված «Զարածխի և պողպատի եվրոպական միավորում հիմնադրելու մասին» պայմանագրում: Այդ պայմանագիրը կնքվել էր 50 տարով և նախատեսում էր համեմատաբար նեղ մասնագիտացումով միջազգային կազմակերպության ստեղծում, որի հիմնական նպատակը Եվրոպայում քարածխի և պողպատի ընդհանուր շուկայի ձևավորումը և դրա գործունեության ապահովումն էր: Ըստ էության, Փարիզի պայմանագիրը եվրոպական տնտեսական ինտեգրման գաղափարի գործնական իրացման առաջին փորձարկումն էր: Դրա շրջանակում ձևավորվեցին առաջին ինստիտուտները, որոնց հիման վրա փորձարկվեցին եվրոպական ինտեգրման հիմքում ընկած սկզբունքները: Պայմանագրի հոդվածների որոշ մասը նվիրված էր մրցակցության կարգավորման հարցերին: Այսպես, օրինակ, պայմանագրի 5-րդ գլուխը (հոդվածներ 60-64) նվիրված էր շուկայի մենաշնորհացմանը հանգեցնող գների ժամանակավոր կամ տեղային իջեցմանը, գնորդների (հատկապես ազգային) նկատմամբ խտրական պայմանների կիրառման արգելմանը: Պայմանագրի վեցերորդ գլխում (հոդվածներ 65-66) ամրագրված են համաձայնությունների և տնտեսական համակենտրոնացումների կարգավորմանը, իսկ յոթերորդ գլխում՝ մրցակցային հարաբերություններին պետական միջամտությանն առնչվող դրույթներ<sup>24</sup>:

Եվրամիության ներկայիս մրցակցային քաղաքականության ինդիկները բխում են «Եվրոպական տնտեսական համագործակցություն ստեղծելու մասին» 1957 թվականի մարտի 25-ին Հռոմում ստորագրված պայմանագրից: Դրա հիմքում դրվեցին Փարիզի պայմանագրի սկզբունքները: Եվրոպական տնտեսական համագործակցության, իսկ հետագայում նաև Եվրամիության (1993 թվականի նոյեմբերի 1-ից) գործունեության նպատակներն են ընդհանուր

<sup>24</sup> «Договороб учреждении европейского объединения угля и стали», В кн. Документы Европейского союза, т. 1, М., 1994, с.19-94.

շուկայի ստեղծումը և մասնակից երկրների տնտեսական քաղաքականությունների մերձեցման ուղիով ամբողջ Համագործակցությունում տնտեսական գործունեության ներդաշնակ զարգացմանը նպաստելը (հոդված 2)<sup>25</sup>: Ուստի Համագործակցության գործունեության կարևոր ուղղություններից մեկն այնպիսի համակարգի ստեղծումն է, որն «ընդհանուր շուկայում մրցակցությունը կպատնեշի խեղաթյուրումներից» (հոդված 3):

Պայմանագրի 4-րդ հոդվածով ամրագրված է Համագործակցության խնդիրները լուծող ինստիտուցիոնալ կառուցվածքը՝ Եվրոպական պառլամենտը, Խորհուրդը, Հանձնաժողովը և Դատարանը: Նույն հոդվածի երկրորդ և երրորդ մասերով նախատեսվում են վերոնշյալ ինստիտուտներին օժանդակող կառույցներ: Այսպես, Խորհրդին և Հանձնաժողովին օժանդակող կառույց է Տնտեսական և սոցիալական կոմիտեն, իսկ վերահսկողությունն իրականացվում է Աուդիտորների պալատի միջոցով: Պայմանագրի 155-163 հոդվածները նվիրված են հանձնաժողովի ձևավորման, որոշումների ընդունման կարգին, ինչպես նաև իրավասություններին ու գործառույթներին:

Եվրոպական հանձնաժողովի ձևավորման երկու մոտեցում կար.

- Հանձնաժողովի անդամների թիվը դարձնել անդամ պետությունների թվին հավասար՝ յուրաքանչյուր երկրից մեկական անդամ,
- Հանձնաժողովի անդամների թիվը անդամ երկրների թվից պակաս սահմանել<sup>26</sup>:

Հանձնաժողովի սկզբնական ձևավորման ժամանակ այն բաղկացած էր 13 անդամից (նվազագույնը պետք է լիներ 12, առավելագույնը՝ 24): Մասատրիիստի պայմանագիրը անդամների թիվը սահմանեց 17: Ավստրիայի, Ֆինլանդիայի ու Շվեդիայի անդամակցությունից հետո անդամների թիվը սահմանվեց 20<sup>27</sup>: 1965 թվականից մինչև 2005 թվականը Հանձնաժողովը բաղկացած է

---

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 95-254.

<sup>26</sup> Տես. Ղազինյան Ա.Գ., Եվրոպական հանձնաժողով. իրավական կարգավիճակի հիմնահարցեր, Ե., 2003, էջ 168:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 195-196:

եղել 20 անդամից, որոնք ընտրվել են անդամ երկրների կառավարությունների կողմից 5 տարի ժամկետով<sup>28</sup>:

Ներկայումս Եվրահանձնաժողովը բաղկացած է 28 կոմիսարներից (Հանձնաժողովի անդամներից), որոնք անդամ երկրներից յուրաքանչյուրի կառավարության կողմից ընդհանուր համաձայնությամբ 5 տարի ժամկետով նշանակված անձինք են: Կոմիսարներից յուրաքանչյուրը ղեկավարում է Հանձնաժողովի կազմում ստեղծված մեկ գլխավոր տնօրինություն<sup>29</sup>: Կոմիսարներ կարող են նշանակվել միայն Եվրամիության անդամ երկրների քաղաքացիներ: Դրանք իրենց պարտականությունները կատարելիս անկախ են և գործում են համագործակցության ընդհանուր շահերից ելնելով: Հանձնաժողովի անդամներն իրենց գործունեությունը կրադարեցնեն ժամկետը լրանալու, մահվան, սեփական դիմումի, ինչպես նաև Խորհրդի կամ Հանձնաժողովի միջնորդագրի հիման վրա՝ Եվրոդատարանի վճռով (հոդված 159-160): Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Հանձնաժողովն է սահմանում իր ընթացակարգային կանոնները: Հանձնաժողովի նախագահը և նրա տեղակալները նշանակվում են Հանձնաժողովի անդամներից:

Հանձնաժողովը կոլեգիալ մարմին է, օժտված է օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու իրավասությամբ և, միաժամանակ, իրականացնում է գործադիր մարմնի գործառույթներ: Գործադիր մարմնի գործառույթներ իրականացնում է մասնավորապես, մրցակցության կարգավորման և պաշտպանության խնդիրներ լուծելիս:

Մրցակցության պաշտպանությունը Եվրամիության տարածքում կարգավորվում է Հռոմի պայմանագրի 81-ից 90-րդ հոդվածներով (նախկին 85-94 հոդվածներ):

Հռոմի պայմանագրի 82-րդ հոդվածը շուկայում գերիշխող դիրքն արգելող դրույթներ չի պարունակում: Հետևաբար, ԵՄ մրցակցային օրենսդրությամբ արգելվում է ոչ թե գերիշխող դիրք

---

<sup>28</sup> Սկզբնական տարբերակում Հանձնաժողովի անդամները նշանակվում էին 4 տարի ժամկետով (հոդված 158):

<sup>29</sup> Ներկայումս մրցակցության գլխավոր տնօրինությունը ղեկավարում է Դա-միայի ներկայացուցիչը:

ունենալը (անկախ դրա մեծությունից), այլ այդ դիրքի չարաշահումը:

Եվրամիությունում տնտեսական համակենտրոնացումները կարգավորվում են Հռոմի պայմանագրի 82-րդ հոդվածի առաջին մասով (միաձուլման այն դեպքի համար, որը կապված էր դրա հետևանքով գերիշխող դիրք ունեցող ձեռնարկությունների չարաշահումների հետ): Իսկ 1987 թվականի նոյեմբերի 17-ից ԵՄ դատարանը 82-րդ հոդվածը կիրառեց ֆիրմաների կողմից այլ տնտեսավարողների կանոնադրական կապիտալում ունեցած բաժինների գնման նկատմամբ<sup>30</sup>: Տնտեսական համակենտրոնացումների նկատմամբ հսկողության ընդհանուր կանոնները սահմանված են Եվրոպական Խորհրդի 21.12.89 N 4064/89 կանոնակարգով (1310/97 կանոնակարգով կատարված փոփոխությամբ): Դրա համաձայն, համակենտրոնացում է համարվում.

- երկու կամ ավելի անկախ ձեռնարկությունների միաձուլումը կամ միացումը,
- առնվազն մեկ ձեռնարկություն վերահսկող անձի կամ անձանց խմբի, մեկ կամ ավելի ձեռնարկությունների կողմից մեկ կամ ավելի ձեռնարկությունների ձեռքբերումը, ինչպես նաև դրանց որոշումների կայացման նկատմամբ, պայմանագրի կամ այլ միջոցներով (ակտիվների կամ արժեթղթերի գնման) ուղղակի կամ անուղղակի հսկողության հաստատումը,
- համատեղ ձեռնարկության ստեղծումը:

ԵՄ միաձուլումների կանոնակարգի առաջին հոդվածի համաձայն, տնտեսական համակենտրոնացումների հայտարարման շեմ է սահմանված<sup>31</sup>.

---

<sup>30</sup> Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Միքայել Միքայելյան, Տիրուհի Հովեյան «Տնտեսական համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության մեխանիզմների ուժեղացման անհրաժեշտությունը ՀՀ-ում», Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները ՀՀ-ում /Գիտաժողովի նյութեր/, Ե., 2009, էջ 226-229:

<sup>31</sup> Նշված հոդվածում հայտարարագրման շեմը սահմանված էր էքյուով: Հետագայում ԵՄ-ն դրամական միավորը շրջանառության մեջ դրվելուց հետո այն փոխարինվեց եվրոյով:



1. համակենտրոնացման բոլոր մասնակիցների տարեկան շրջանառությունների գումարը գերազանցում է 5 մլրդ եվրոն,
2. առնվազն երկու մասնակիցներից յուրաքանչյուրի տարեկան շրջանառությունը ԵՄ տարածքում գերազանցում է 250 մլն եվրոն, բացառությամբ այն դեպքի, երբ այդ մասնակիցների՝ ԵՄ տարածքում շրջանառության առնվազն 2/3-ը բաժին է ընկնում ԵՄ անդամ մեկ և միևնույն երկրին:

Ռուսաստանի ԳԱ Համաշխարհային էկոնոմիկայի և միջազգային հարաբերությունների ինստիտուտի գիտաշխատող Ե. Ուլիբիշևայի կարծիքով, վերոհիշյալ շեմը բարձր է: Այդ պատճառով էլ Եվրոհանձնաժողովի հսկողության տակ է ընկնում ԵՄ տարածքում միաձուլումների և միացումների մոտ 1/3-ը<sup>32</sup>:

Համակենտրոնացման մասնակիցների տարեկան շրջանառության հաշվարկներում ներառվում են ոչ միայն տվյալ ընկերության, այլ նաև նրա հետ կապված, այսինքն՝ իրեն վերահսկող և իր կողմից վերահսկվող ընկերությունների շրջանառությունները:

Կանոնակարգերով տարբերակված մոտեցում է սահմանված հորիզոնական և ուղղահայաց միաձուլումների նկատմամբ: Հորիզոնական միաձուլումների դեպքում նրանց համատեղ բաժինը ապրանքային շուկայում չպետք է գերազանցի 15%-ը, ուղղահայաց համակենտրոնացման դեպքում՝ 25%-ը:

Տնտեսվարող սուբյեկտների կողմից համակենտրոնացումների հայտարարագրման և Հանձնաժողովի կողմից դրանց քննարկման ընթացակարգը սահմանված է Խորհրդի 25.07.90 N 2367/90 կանոնակարգով: Հետագայում՝ 2004թ. Եվրոպական խորհրդի ընդունած՝ «Ձեռնարկությունների միջև համակենտրոնացումների հսկողության» թիվ 139 կանոնակարգի և դրա կիրարկումն ապահովող թիվ 802 կանոնակարգի հիման վրա<sup>33</sup> մրցակցության կարգավորման գործառույթը դրված է Եվրոհանձնաժողովի Մրցակցության գլխավոր տնօրինության վրա: Վերջինիս իրավասության տակ է գտնվում ԵՄ տնտեսական տարածքում այն համակենտրոնացումների կարգավորումը, որոնցում մասնակից

<sup>32</sup> Е. Улымбышева. Антимонопольное регулирование в ЕС, Мировая экономика и международные отношения, 1994, N 2, с. 126.

<sup>33</sup> <http://ec.europa.eu/comm/competition/mergers/legislation/legislation.html>

կողմերը ներկայացնում են ԵՄ տարբեր երկրներ: Գործող կարգի համաձայն, Մրցակցության գլխավոր տնօրինությունը կարող է իր իրավասության տակ գտնվող գործարքի հսկողությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն փոխանցել ԵՄ անդամ-երկրների համապատասխան մարմինների իրավասությանը: Բացի այդ, համակենտրոնացումների մասնակիցներն, իրենց հերթին, կարող են հանդես գալ տվյալ գործարքի քննարկումը ԵՄ անդամ-երկրի մրցակցային մարմնի իրավասությանը կամ հակառակ ուղղությամբ փոխանցելու հայտով:

Համակենտրոնացումները պատշաճ կարգով գնահատելու համար Եվրոպական հանձնաժողովը իրավասու է պահանջել ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը, Եվրահամայնքի տարածքում ստուգումներ, ինչպես նաև հետաքննություն կատարել (հարցաքննել օգտակար տեղեկություն ունեցող բոլոր անձանց և գրանցել դրանց կողմից արված հայտարարությունները): Հանձնաժողովի կողմից լիազորված պաշտոնյաները ստուգումն անցկացնելու համար ունեն հետևյալ լիազորությունները՝

- մուտք գործել ձեռնարկության կամ ձեռնարկության ընկերակցության ցանկացած տարածք,
- ուսումնասիրել գործունեությանը վերաբերող մատյաններն ու այլ գրանցումները, անկախ այն բանից, թե ինչ կերպ են նրանք պահվում,
- վերցնել կամ այլ կերպ ստանալ պատճեններ կամ քաղածքներ այդ մատյաններից և գրանցումներից,
- ժամանակավոր կամ ստուգման համար անհրաժեշտ ժամանակով արգելքի տակ դնել համակենտրոնացմանը մասնակից տնտեսվարող սուբյեկտների գործունեությանը վերաբերող ցանկացած տարածք, մատյաններ կամ գրանցումներ,
- գործի առարկային վերաբերող փաստերի կամ փաստաթղթերի, ինչպես նաև քննության առարկայի վերաբերյալ հարցաքննել ձեռնարկության կամ ձեռնարկության ընկերակցության անձնակազմի անդամի կամ ներկայացուցչի և գրանցել պատասխանները:

Անհրաժեշտության դեպքում, Հանձնաժողովի պաշտոնյաները լիազորված են դիմելու ձեռնարկության գրասենյակը կնքելու պրակտիկային:

#### Հարցեր կրկնության համար

1. Ի՞նչ համաձայնագիր է ընկած Եվրամիություն մրցակցության կարգավորման հիմքում:
2. Ո՞ր մարմինն է կարգավորում տնտեսական համակենտրոնացումները Եվրամիության ընդհանուր տնտեսական տարածքում:
3. ԵՄ մրցակցային օրենսդրությամբ արգելվու՞մ է գերիշխող դիրք ունենալը:
4. Որո՞նք են տնտեսական համակենտրոնացման հանգեցնող գործարքները ԵՄ-ում:
5. Ո՞րն է տնտեսական համակենտրոնացումների հայտարարման շեմը:
6. Արդյո՞ք տարբերակված մոտեցում է սահմանված հորիզոնական և ուղղահայաց միաձուլումների նկատմամբ ԵՄ-ում:
7. Որո՞նք են միաձուլումների արգելման շեմը:
8. Համակենտրոնացման մասնակիցների տարեկան շրջանառության հաշվարկներում ինչպե՞ս են հաշվի առնվում դրանց հետ փոխկապված անձանց շրջանառությունները:
9. Համակենտրոնացումները գնահատելու համար ի՞նչ իրավասություններով է օժտված Եվրահանձնաժողովը:
10. Իրավասու՞ է Եվրահանձնաժողովը քննարկելու ԵՄ առանձին երկրներում տնտեսական համակենտրոնացման դեպքերը:

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության մրցակցության պաշտպանության մասին օրենքը տարբերակում է ուղղահայաց և հորիզոնական համաձայնությունները: Դրանց համապատասխան էլ տարբերակվում են համակենտրոնացումների հայտարարագրման շեմը: ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 23-ի թիվ 191-Ն որոշման համաձայն հորիզոնական համակենտրոնացման դեպքում հայտարարագրման շեմի հետևյալ մեծություններն են սահմանվել.

1. Հորիզոնական համակենտրոնացման մասնակիցների ակտիվների ընդհանուր արժեքը դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում կազմել է հինգ հարյուր միլիոն դրամ կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների արժեքը դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում` երեք հարյուր միլիոն դրամ,
2. Հորիզոնական համակենտրոնացման մասնակիցների հասույթների ընդհանուր չափը դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում կազմել է մեկ միլիարդ դրամ կամ մասնակիցներից առնվազն մեկի հասույթի չափը դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում` յոթ հարյուր միլիոն դրամ,
3. ուղղահայաց կամ խառը համակենտրոնացման մասնակիցների ակտիվների ընդհանուր արժեքը դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում կազմել է մեկ միլիարդ դրամ կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների արժեքը դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում` յոթ հարյուր միլիոն դրամ,
4. Ուղղահայաց կամ խառը համակենտրոնացման մասնակիցների հասույթների ընդհանուր չափը դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում կազմել է երեք միլիարդ դրամ կամ մասնակիցներից առնվազն

մեկի հասույթի չափը դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում՝ երկու միլիարդ դրամ:

5. Օրենքի համաձայն գերիշխող դիրքի հանգեցնող կամ գերիշխող դիրքն ամրապնդող համակենտրոնացումը թույլատրվում է Հանձնաժողովի որոշման հիման վրա, որը կարող է պարունակել նաև համակենտրոնացման մասնակցի (մասնակիցների) համար պարտադիր կատարման ենթակա պայմաններ և պարտավորություններ<sup>34</sup>:

Համակենտրոնացումը չհայտարարագրելը կամ արգելված համակենտրոնացումը գործողության մեջ դնելը առաջացնում է տուգանքի նշանակում նախորդ տարվա հասույթի չորս տոկոսի չափով, բայց ոչ ավել հինգ հարյուր միլիոն դրամից:

Բելառուսի Հանրապետությանցվ (ԲՀ) մրցակցության պաշտպանության օրենսդրությամբ («Մենաշնորհ գործունեության հակազդեցության և մրցակցության զարգացման մասին» ԲՀ օրենք) տնտեսվարող սուբյեկտների վերակազմակերպումները տեղի են ունենում կարգավորող պետական մարմնի թույլտվությամբ, եթե դրա մասնակիցներից որևէ մեկը՝

- գերիշխող դիրք ունի,
- քվեարկող բաժնետոմսերի ձեռքբերման դեպքում, եթե դրանց համատեղ բաժինը կանոնադրական կապիտալում առնվազն 25 տոկոս է,
- վերակազմակերպվող կամ ստեղծվող կազմակերպությունների ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է բազային մեծության հարյուր հազարապատիկը,
- ապրանքների իրացումից ստացվող տարեկան հասույթը գերազանցում է բազային մեծության երկու հարյուր հազարապատիկը,

---

<sup>34</sup> Մինչև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 12.04.2011 թվականի թիվ 137 օրենքը գործողության մեջ մտնելը Գերիշխող դիրքի հանգեցնող համակենտրոնացումները արգելվում էր, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք նպաստում էին սպառողների շահերի պաշտպանելուն կամ մրցակցության զարգացմանը:

- դրա մասնակիցներից մեկը գրանցված է գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների ռեեստրում: Կարգավորող մարմինը արգելում է գերիշխող դիրքի հանգեցնող համակենտրոնացումները, եթե դրանց մասնակիցները չեն հիմնավորում, որ դրանք կբերեն արտադրության (իրացման) կատարելագործման, տեխնիկական առաջընթացի խթանման:

ԲՀ օրենսդրությամբ գերիշխող դիրք է, եթե սուբյեկտը շուկայում ունի առնվազն 35 տոկոս բաժին, երկու խոշոր սուբյեկտների համատեղ բաժինը առնվազն 54 տոկոս է, երեք խոշորինը՝ առնվազն 78 և 4 խոշորինը՝ առնվազն 95 տոկոս:

Ղազախստանի օրենսդրությամբ՝ առանց հակամենաշնորհային մարմնի տեղեկության տնտեսական համակենտրոնացումը, որը բերում է շուկայի մասնակցի անձանց խմբի գերիշխող դիրքի սահմանմանը կամ ուժեղացմանը և (կամ) մրցակցության սահմանափակմանը, դատարանը կարող է այդ համակենտրոնացումը չեղյալ համարել հակամենաշնորհային մարմնի հայցով: Տնտեսական համակենտրոնացում է նաև շուկայի սուբյեկտի կողմից այլ սուբյեկտի արտադրության հիմնական միջոցների կամ ոչ նյութական ակտիվների ձեռքբերումը, եթե դրանց հաշվեկշռային արժեքը գերազանցում է ձեռքբերող սուբյեկտի արտադրության հիմնական միջոցների կամ ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքի 10 տոկոսը:

Տնտեսական համակենտրոնացումն արգելվում է, եթե այն բերում է մրցակցության սահմանափակմանը կամ գերիշխող դիրքի: Ղազախստանի Հանրապետության օրենսդրությամբ՝ ապրանքային շուկայում սուբյեկտն ունի գերիշխող դիրք, եթե շուկայում ունի առնվազն 35 տոկոս բաժին, երկու կամ երեք խոշոր սուբյեկտների համատեղ բաժինը առնվազն 50 տոկոս է, և 4 խոշորի բաժինը՝ առնվազն 70 տոկոս է:

Ֆինանսական շուկաների համար օրենքը համատեղ գերիշխելու առանձնակի դեպքեր է դիտարկել. Երբ երկու սուբյեկտը միասին շուկայում ունեն առնվազն 50 տոկոս և երեքը միասին՝ առնվազն 70 տոկոս: Սուբյեկտը գերիշխող դիրք ունեցող չի համարվի, եթե նրա բաժինը 15 տոկոսը չի գերազանցի:

Օրենքը նախատեսում է նաև բացառություններ (ֆինանսական կազմակերպությունների կողմից հետագա վերավաճառքի նպատակով բաժնետոմսերի ձեռքբերման և ժամանակավոր կառավարիչների նշանակման դեպքերի համար): Օրենքով կանոնակարգված են հակամենաշնորհային մարմնից համակենտրոնացման վերաբերյալ համաձայնություն ստանալու համար տնտեսվարողների կողմից միջնորդագիր ներկայացնելու և նման համաձայնություն տալու կամ մերժելու հիմքերն ու գործընթացը:

Օրենքում տարբերակված չեն տնտեսական համակենտրոնացումները՝ ըստ հորիզոնական, ուղղահայաց և խառը տեսակների: Նման դեպքերում կարող են մեծ դեր խաղալ սուբյեկտիվ գործոնները (կարգավորող մարմնի աշխատակազմի պրոֆեսիոնալիզմը, բարի կամքը և այլն):

Գրդգստանի հակամենաշնորհային օրենսդրությամբ՝ գերիշխող դիրքի առաջացում թույլ չտալու նպատակով նախնական հսկողություն է սահմանվում ֆիրմաների ստեղծման, վերակազմակերպման նկատմամբ: Նման մտադրության պարագայում տնտեսվարողները պարտավոր են դրա վերաբերյալ միջնորդագիր ներկայացնել հակամենաշնորհային մարմնին: Եթե նոր ֆիրմայի ստեղծումը կամ գործողների վերակազմակերպումը կարող է հանգեցնել որևէ ապրանքային շուկայում գերիշխող դիրքի կամ մրցակցության էական սահմանափակման, ապա նման համակենտրոնացումն արգելվում է: Կարգավորողի նախնական համաձայնությունն է պետք նաև որոշակի ապրանքային շուկայում առնվազն 35 տոկոս բաժին ունեցող սուբյեկտների կողմից նույն շուկայի այլ սուբյեկտների բաժինների, ինչպես նաև ֆիզիկական կամ իրավաբանական այլ անձանց կողմից գերիշխող դիրք ունեցող սուբյեկտի բաժնետոմսերի վերահսկիչ ծրարի (ձայի իրավունք տվող բաժնետոմսերի 50 տոկոսից ավել) ձեռքբերման համար:

Գրդգստանի Հանրապետության օրենսդրությամբ ապրանքային շուկայում սուբյեկտն ունի գերիշխող դիրք, եթե այն շուկայում ունի առնվազն 35 տոկոս բաժին, կամ՝ եթե ոչ ավել քան երեք խոշոր սուբյեկտների համատեղ բաժինը առնվազն 50 տոկոս է, և ոչ ավել քան 5 խոշոր սուբյեկտի բաժինը (եթե չեն բա-

վարարում առաջին երկու պայմաններին): Դրոզտանի օրենքը ևս (ինչպես Դազախատանում է) առանձնացնում է ֆինանսական շուկաներում համատեղ գերիշխելու չափորոշիչները, այն է՝ երկու խոշորներն ունեն առնվազն 50 տոկոս բաժին, երեքը՝ 70 տոկոս բաժին:

Տնտեսվարող սուբյեկտները և դրանց պաշտոնատար անձինք պատժվում են հակամենաշնորհային մարմնի որոշումը չկատարելու համար:

Դրոզտանի օրենքը նույնպես չի տարբերակում տնտեսական համակենտրոնացումները՝ ըստ հորիզոնական և ուղղահասյաց տեսակների:

Ռուսաստանի Դաշնության մրցակցության պաշտպանության մասին օրենքի յոթերորդ գլուխը նվիրված է տնտեսական համակենտրոնացման (առնվազն մեկ մլրդ ռուբլու նյութական և ոչ նյութական ակտիվների և ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի ձեռքբերման գործարքների) նկատմամբ պետական հսկողությանը: Հակամենաշնորհային մարմնի (Դաշնային հակամենաշնորհային ծառայության՝ ԴՀԾ) նախնական համաձայնությունն անհրաժեշտ է՝

- Առևտրային կազմակերպությունների (բացառությամբ՝ ֆինանսական) միաձուլումների և միացումների դեպքում, եթե դրանց ակտիվների գումարային արժեքը միջնորդագրի ներկայացմանը նախորդող վերջին հաշվետու ամսաթվի հաշվապահական հաշվեկշռով գերազանցել է 7 (նախկինում՝ 3) մլրդ ռուբլին կամ միաձուլմանն ու միացմանը նախորդող օրացուցային տարում այդ այդ կազմակերպությունների գումարային հասույթը գերազանցում է 10 (նախկինում՝ 6) մլրդ ռուբլին,
- Եթե ֆինանսական կազմակերպությունների միաձուլման կամ միացման պարագայում ակտիվների արժեքի գումարային մեծությունը սահմանում է կառավարությունը (վարկային կազմակերպությունների համար՝ կենտրոնական բանկի համաձայնությամբ):

ԴՀԾ-ի նախնական համաձայնությամբ են իրականացվում նաև այն ձեռքբերումները, որոնց տիրապետողների և օտարող-



ների համատեղ ակտիվների կամ գույքի գումարային արժեքը վերջին հաշվեկշռով գերազանցում է 7 մլրդ ռուբլին, կամ, դրանց վերջին օրացուցային տարվա գումարային հասույթը գերազանցում է 10 մլրդ ռուբլին և (բաժինը) և (կամ) գույքը, որը ձեռք է բերվում, գերազանցում է 150 մլն ռուբլին, կամ, եթե նշված անձանցից որևէ մեկը գրանցված է գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների գրանցամատյանում, եթե անձը (անձանց խումբը)։

- ձեռք է բերում բաժնետիրական ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի ավելի քան 25 տոկոսը,
- Ձեռք է բերում ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի ավելի քան մեկ երրորդը։

Գերիշխող դիրքի հանգեցնող կամ գերիշխող դիրքը ուժեղացնող համակենտրոնացումներն արգելվում են։

Գերիշխող են համարվում տնտեսվարող սուբյեկտների՝ ապրանքային շուկայում ունեցած այն դիրքը, որը որոշիչ ազդեցություն է թողնում ապրանքի շրջանառության պայմանների վրա։

Գերիշխող է համարվում այն սուբյեկտը, որի բաժինը ապրանքային շուկայում.

- գերազանցում է 50 տոկոսը, եթե դրա հարցի քննարկման ժամանակ չպարզվի, որ այն չունի գերիշխող դիրք (չի կարող ազդել ապրանքի շրջանառության պայմանների վրա),
- 50 տոկոսից պակաս բաժին ունեցողը, որի բաժինը մրցակիցների հետ համեմատած կայուն է։

Գերիշխող չի համարվում այն սուբյեկտի դիրքը, որի բաժինը շուկայի ընդհանուր ծավալում պակաս է 35 տոկոսից։ ՌԳ օրենսդրությամբ ևս համատեղ գերիշխելու դրույթ է ամրագրված։

Համատեղ գերիշխող են համարվում խոշոր սուբյեկտներից (որոնց բաժինները առանձին-առանձին մրցակիցների բաժինները գերազանցում են) յուրաքանչյուրը, եթե ոչ ավել քան երեք սուբյեկտի համատեղ բաժինը գերազանցում է 50 տոկոսը, կամ ոչ ավել քան հինգ սուբյեկտի համատեղ բաժինը գերազանցում է 70 տոկոսը (սույն դրույթը չի կիրառվում այն սուբյեկտի նկատմամբ, որի բաժինը չի գերազանցում 8 տոկոսը)։

## Հարցեր կրկնության համար

1. ՀՀ օրենսդրությամբ արդյո՞ք տարբերակված են տնտեսական համակենտրոնացումները:
2. Որքա՞ն է համակենտրոնացումների հայտարարագրման շեմը Հայաստանում:
3. Ո՞ր դեպքերում են արգելվում համակենտրոնացումները Հայաստանում:
4. Որո՞նք են տնտեսական համակենտրոնացման հանգեցնող գործարքները Հայաստանում:
5. Որո՞նք են գերիշխող դիրքի չափանիշները Հայաստանում:
6. Ո՞րն է տնտեսական համակենտրոնացումների հայտարարագրման շեմը Բելոռուսի Հանրապետությունում:
7. Արդյո՞ք տարբերակված մոտեցում է սահմանված հորիզոնական և ուղղահայաց միաձուլումների նկատմամբ ԲՀ-ում,;
8. Որո՞նք են միաձուլումների արգելման շեմը ԲՀ-ում:
9. Որո՞նք են գերիշխող դիրքի չափանիշները ԲՀ-ում:
10. Ղազախստանի Հանրապետության օրենսդրությամբ արդյո՞ք տարբերակված են տնտեսական համակենտրոնացումները:
11. Որքա՞ն է համակենտրոնացումների հայտարարագրման շեմը Ղազախստանում,
12. Ո՞ր դեպքերում են արգելվում համակենտրոնացումները Ղազախստանում:
13. Որո՞նք են տնտեսական համակենտրոնացման հանգեցնող գործարքները Ղազախստանում:
14. Որո՞նք են գերիշխող դիրքի չափանիշները Ղազախստանում:
15. Համատեղ գերիշխման դեպքում Ղազախստանի օրենսդրությամբ առավելագույնը քանի՞ տոկոսի դեպքում սուբյեկտը չի համարվում գերիշխող դիրք ունեցող:
16. Գրղզստանի Հանրապետության օրենսդրությամբ տարբերակվա՞ծ են արդյոք տնտեսական համակենտրոնացումները:

17. Որքա՞ն է համակենտրոնացումների հայտարարագրման շեմը Վրդգստանում:
18. Ո՞ր դեպքերում են արգելվում համակենտրոնացումները Վրդգստանում:
19. Որո՞նք են տնտեսական համակենտրոնացման հանգեցնող գործարքները Վրդգստանում:
20. Որո՞նք են գերիշխող դիրքի չափանիշները Վրդգստանում:
21. Ռ-Վ օրենսդրությամբ արդյո՞ք տարբերակված են տնտեսական համակենտրոնացումները:
22. Որքա՞ն է համակենտրոնացումների հայտարարագրման շեմը Ռ-Վ-ում:
23. Ո՞ր դեպքերում են արգելվում համակենտրոնացումները Ռ-Վ-ում:
24. Որո՞նք են տնտեսական համակենտրոնացման հանգեցնող գործարքները Ռ-ուսաստանում:
25. Որո՞նք են գերիշխող դիրքի չափանիշները Ռ-ուսաստանում:

**ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ  
ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄՆԵՐԻ  
ԹՈՒՅՆՏՎՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ  
ԼՈՒԾՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ**

Սույն գլխում փորձենք խնդիրների լուծման միջոցով անդրադառնալ տնտեսական համակենտրոնացումների կիրառական հարցերին:

**Օրինակ 1**

«Շաքարավազ» ապրանքային շուկայի ֆիրմաների 2000 և 2014 թվականների արտադրության ծավալները բնութագրվում են հետևյալ ցուցանիշներով.

Ֆիրմաներ	Արտադրության ծավալը, տ	
	2000 թ.	2014 թ.
N1	1600	1600
N2	1200	1500
N3	1000	
N4	1500	1800
N5	1500	2000

Ինչպե՞ս է փոխվել շուկայի համակենտրոնացման աստիճանը, եթե կենտ համարի ֆիրմաներն իրացրել են արտադրանքի 80 տոկոսը, զույգ համարինը՝ 90 տոկոսը, իսկ N3. Ֆիրմայում, աշխատողների միջին ցուցակային թվի անփոփոխ լինելու դեպքում, աշխատանքի արտադրողականությունն աճել է 20 տոկոսով:

**Լուծում**

Նախ, 2000 և 2014 թվականների համար առանձին-առանձին որոշենք շուկաների ծավալները<sup>35</sup>: Շուկայի ծավալը որոշվում է իրացման ծավալով: Այն հավասար է բոլոր ֆիրմաների իրացման ծավալների գումարին: Մեր օրինակում N1, N3 և N5

<sup>35</sup> Այս և հետագա դեպքերում, նպատակահարմարությունից ելնելով, խնդիրների լուծումը կիրականացնենք աղյուսակների միջոցով: Բայց լուծման եղանակը յուրաքանչյուր անձ ինքն է ընտրում:

Ֆիրմաների իրացման ծավալները հավասար են դրանց արտադրության ծավալների 80 տոկոսին, իսկ N2 և N4 ֆիրմաների իրացման ծավալները, համապատասխանաբար՝ դրանց արտադրության ծավալների 90 տոկոսին: N3 ֆիրմայի 2014 թ. Արտադրության ծավալը որոշելու համար հիմք ընդունենք աշխատանքի արտադրողականության 20 տոկոս աճի ցուցանիշը:

Աղյուսակը կունենա հետևյալ տեսքը.

Ֆիրմաներ	Արտադրության ծավալը, տ		Իրացման ծավալը, տ	
	2000թ.	2014թ.	2000թ.	2014թ.
N1	1600	1600	1280	1280
N2	1200	1500	1080	1350
N3	1000	1200	800	960
N4	1500	1800	1350	1620
N5	1500	2000	1200	1600
Ընդամենը			5710	6810

Երկրորդ գլխում ներկայացված համակենտրոնացման գործակցի և Հերֆեդալ-Հիրշմանի ինդեքսները հաշվարկելու համար, նախ, հաշվարկենք ֆիրմաների բաժինները և դրանց բառակուսիները շաքարավազի շուկաներում 2000 և 2014 թվականների համար:

Ֆիրմաներ	Արտադրության ծավալը, տ		Իրացման ծավալը, տ		Ֆիրմայի բաժինը շուկայում, % (d <sub>i</sub> )		Ֆիրմայի բաժնի քառակուսին, (d <sub>i</sub> ) <sup>2</sup>	
	2000թ.	2014թ.	2000թ.	2014թ.	2000թ.	2014թ.	2000թ.	2014թ.
N1	1600	1600	1280	1280	22,4	18,8	502	353
N2	1200	1500	1080	1350	18,9	19,8	423	392
N3	1000	1200	800	960	14,0	14,1	196	199
N4	1500	1800	1350	1620	23,6	23,8	557	566
N5	1500	2000	1200	1600	21,0	23,5	441	552
Ընդամենը			5710	6810	100	100	2119	2062

Շաքարավազի շուկաներում Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսները 2000 և 2014 թվականներին համապատասխանաբար եղել են 2119 և 2062, համակենտրոնացման գործակիցները՝  $CR_3^{2000}=23.6+22.4+21=67$ ,  $CR_3^{2014}=23.8+23.5+19.8=67.1$ :

*Պատասխան* Համակենտրոնացման գործակիցը 2014 թվականին 2000 թվականի համեմատ աճել է 0,1 տոկոսային միշով՝ մնալով համակենտրոնացման միջին մակարդակին, իսկ Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսը նվազել է 57 միավորով՝ մնալով համակենտրոնացման բարձր մակարդակին:

## Օրինակ 2.

«Շաքարավազ» ապրանքային շուկայի ֆիրմաների 2000 և 2014 թվականների արտադրության և ներմուծման ծավալները բնութագրվում են հետևյալ ցուցանիշներով.

Ֆիրմաներ	Արտադրության ծավալը, հազ.տ		Ներմուծման ծավալը, հազ.տ	
	2000 թ.	2014 թ.	2000թ.	2014թ.
N1	15.0	16.0	-	-
N2	12.0		-	-
N3	-	14,0	-	-
N4	-	-	15.0	18.0
N5	-	-	15.0	20.0

Ինչպե՞ս է փոխվել շուկայի համակենտրոնացման գործակիցը և Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսը, եթե արտադրող ֆիրմաներն իրացրել են արտադրանքի 80 տոկոսը, ներմուծողները՝ ներմուծման 90 տոկոսը, իսկ N2 և N3 ֆիրմաներում աշխատողների միջին ցուցակային թվի անփոփոխ լինելու դեպքում աշխատանքի արտադրողականությունը 2014թ. 2000թ. համեմատ աճել է 10 տոկոսով:

### Լուծում

Նախ, 2000 և 2014 թվականների համար առանձին-առանձին որոշենք շուկաների ծավալները: Շուկայի ծավալը որոշվում է իրացման ծավալով՝ անկախ այն բանից, դա ներմուծո՞ղ, թե արտադրող ֆիրմայի իրացում է: Այն հավասար է բոլոր ֆիրմաների

իրացման ծավալների գումարին: Մեր օրինակում N1, N2 և N3 ֆիրմաների իրացման ծավալները հավասար են դրանց արտադրության ծավալների 80 տոկոսին, իսկ N4 և N5 ֆիրմաների իրացման ծավալները՝ համապատասխանաբար դրանց ներմուծման ծավալների 90 տոկոսին: N2 և N3 ֆիրմաների 2014 թ. և 2000թ. Արտադրության ծավալները որոշելու համար հիմք ընդունենք աշխատանքի արտադրողականության 10 տոկոս աճի ցուցանիշները:

Աղյուսակը կունենա հետևյալ տեսքը.

Ֆիրմաներ	Արտադրության ծավալը, հազ.տ		Ներմուծման ծավալը, հազ.տ		Իրացման ծավալը, հազ.տ	
	2000 թ.	2014 թ.	2000թ.	2014թ.	2000թ.	2014թ.
N1	15.0	16.0	-	-	12	12,8
N2	12.0	13,2	-	-	9,6	10,6
N3	12,7	14,0			10,2	11,2
N4	-	-	15.0	18.0	13,5	16,2
N5	-	-	15.0	20.0	13,5	18,0
Ընդամենը					<b>58,8</b>	<b>68,8</b>

Հաշվարկենք համապատասխան տարիներին ֆիրմաների բաժինները ապրանքային շուկաներում և դրանց քառակուսիները (տե՛ս հաջորդ աղյուսակը):

Շաքարավազի շուկաներում Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսը 2000 և 2014 թվականների համապատասխանաբար եղել են 2039 և 2382 միավոր, համակենտրոնացման գործակիցները՝  $CR_3^{2000} = 23.0 + 23.0 + 20.4 = 66.4$  և  $CR_3^{2014} = 29.1 + 26.2 + 18.6 = 73.9$  տոկոս:

Ֆիրմաներ	Ֆիրմայի բաժինը շուկայում, % ( $d_i$ )		Ֆիրմայի բաժնի քառակուսին, ( $d_i$ ) <sup>2</sup>	
	2000 թ.	2014 թ.	2000 թ.	2014 թ.
N1	20,4	18,6	416	346
N2	16,3	15,4	266	237
N3	17,3	16,3	299	266
N4	23,0	26,2	529	686
N5	23,0	29,1	529	847
Ընդամենը	100	100	2039	2382

Պատասխան՝ 2014 թվականին 2000 թվականի համեմատ համակենտրոնացման գործակիցն աճել է 7,5 տոկոսային միջով, իսկ Հերֆեմդալ-Հիրշմանի ինդեքսը՝ 343 միավորով:

**Օրինակ 3**

«Կաթ» ապրանքային շուկայի 2000 և 2014 թվականների մասնակիցների արտադրության մի քանի ցուցանիշ բերված են աղյուսակում

Ֆիրմաներ	Արտադրական կարողությունը, հազ.լ		Արտադրական կարողության օգտ. գործակից	
	2000թ.	2014թ.	2000 թ.	2014թ.
N1	1500	1600	0,8	0,9
N2	1200	1000	0,9	0,9
N3	1000		0,8	0,9
N4	1500	1600	0,9	0,9
N5	1600	1800	0,8	0,8
N6.	1400		0,9	0,8

Ինչպե՞ս է փոխվել շուկայի համակենտրոնացման աստիճանը, եթե կենտ համարի ֆիրմաներն իրացրել են արտադրանքի 80 տոկոսը, զույգ համարինը՝ 90 տոկոսը, իսկ N 3 և N 6 ֆիրմայում աշխատողների միջին ցուցակային թվի անփոփոխ լինելու դեպքում 2014թ. 2000թ.-ի նկատմամբ աշխատանքի արտադրողականությունն աճել է 20 տոկոսով:

**Լուծում**

Խնդրի ընդհանուր լուծումը նման է նախորդ խնդիրների լուծմանը: Պարզապես, արտադրության ծավալների փոխարեն տրված են արտադրական կարողությունների և դրանց օգտագործման գործակիցների ցուցանիշները: Արտադրական կարողությունը բնութագրում է միավոր ժամանակահատվածում տվյալ արտադրանքի արտադրության առավելագույն հնարավորությունը: Իսկ արտադրական կարողությունների օգտագործման գործակիցները հաշվի առնելով՝ կստանանք արտադրանքի փաստացի քանակը: Ելնելով



դրանից՝ կստանանք ներքոհիշյալ աղյուսակներում գետեղված ցուցանիշները.

Աղյուսակ 1

Ֆիրմաներ	Արտադրության ծավալը, հազ.լ		Իրացման ծավալը, հազ.լ	
	2000 թ.	2014 թ.	2000 թ.	2014 թ.
N1	1200	1440	960	1152
N2	1080	900	972	810
N3	800	1080	640	864
N4	1350	1440	1215	1296
N5	1280	1440	1024	1152
N6	1050	1120	945	1008
Ընդամենը			5756	6762

Աղյուսակ 2

Ֆիրմաներ	Ֆիրմայի բաժինը շուկայում, % ( $d_i$ )		Ֆիրմայի բաժնի քառակուսին, ( $d_i$ ) <sup>2</sup>	
	2000թ.	2014 թ.	2000թ.	2014 թ.
N1	16.7	17,0	279	289
N2	16,9	12,0	286	144
N3	11,1	12,8	123	164
N4	21,1	19,2	445	369
N5	17,8	17.0	317	289
N6	16,4	14,9	269	222
Ընդամենը	100	100	1719	1477

Կաթի շուկաներում Հերֆեռդալ-Հիրշմանի ինդեքսները 2000 և 2014 թվականներին համապատասխանաբար եղել են 1719 և 1477, համակենտրոնացման գործակիցները՝

$$CR_3^{2000}=21,1+17,8+16,9=55,8 \text{ և } CR_3^{2014}=19,2+17,0+17,0=53,2:$$

Պատասխան՝ 2014 թվականին 2000 թվականի համեմատ «Կաթ» ապրանքային շուկայում, չնայած համակենտրոնացման աստիճանի նվազմանը (համակենտրոնացման գործակիցը նվազել է 2,6 տոկոսային միշով, իսկ Հերֆեռդալ-Հիրշմանի ինդեքսը՝ 242 միավորով)՝ մնալով համակենտրոնացման միջին մակարդակին:

#### Օրինակ 4

Կենտրոնական Եվրոպայի «ցեմենտ» ապրանքային շուկայում ֆիրմաների 2014 թ. արտադրության ծավալները բնութագրվում են ստորև բերված աղյուսակի ցուցանիշներով.

Ֆիրմաները	Արտադրությունը, մլն տ
N1	25
N2	30
N3	45
N4	15
N5	20
N6	10
N7	5

Թիվ 6 և 7 ֆիրմաները միաձուլման նպատակով դիմել են Եվրահանձնաժողովին: Եվրահանձնաժողովը կթույլատրի<sup>o</sup> այդ միաձուլումը, եթե կենտ համարի ֆիրմաները իրացրել են արտադրանքի 90 տոկոսը, զույգը՝ 80 տոկոսը:

#### Լուծում

Ֆիրմաների միաձուլման տեսքով վերակազմակերպումը կարող է հանգեցնել ձևավորվող ֆիրմայի շուկայական իշխանության մեծացմանը, որը կարող է ձևավորվող ֆիրմային գերիշխող դիրքի կամ մրցակցության տեսանկյունից ոչ ցանկալի իշխանության և (կամ) նպաստել մրցունակ ֆիրմայի ստեղծմանը, որը դրականորեն կազդի ընդհանուր մրցակցության վրա: Եվրահանձնաժողովի խնդիրն է գնահատել միաձուլման հետևանքը և դրա հիման վրա որոշում կայացնել միաձուլումը թույլատրելու կամ արգելելու վերաբերյալ: Ընդ որում, գնահատման ժամանակ պետք է հաշվի առնել թե՛ կարճատև, թե՛ երկարտև հեռանկարները: Այդ նպատակով պետք է նկատի ունենանք համակենտրոնացման և փաստացի արդյունքը, և թե՛ հնարավոր (պոտենցիալ՝ 100 տոկոսանոց իրացում ունենալու հանգամանքը):

Ելնելով խնդրի պայմաններից՝ կազմենք նոր աղյուսակ.

Ֆիրմաները	Արտադրությունը, մլն տ	Իրացման ծավալը, մլն տ	Ֆիրմայի բաժինը շուկայում
N1	25	22,5	16,7
N2	30	27	20,0
N3	45	40,5	30,0
N4	15	13,5	10,0
N5	20	18	13,3
N6	10	9	6,7
N7	5	4,5	3,3
Ընդամենը		135	100

N6 և N7 ֆիրմաների միաձուլման հետևանքով դրանց փաստացի և պոտենցիալ համատեղ բաժինը չպետք է գերազանցի բույլատրելի սահմանը: Եվրամիությունում հորիզոնական համակենտրոնացման դեպքում այն չպետք է գերազանցի 15 տոկոսը (տե՛ս գլուխ 3-ը):

Փաստացի՝ N6 ֆիրմա + N7 ֆիրմա=6,7+3,3=10,0 տոկոս, փոքր է 15 տոկոսից: Պոտենցիալը հաշվարկելու համար ենթադրում ենք, որ դրանք կարող են իրացնել ամբողջ արտադրանքը (բնականաբար, եթե արտադրական կարողությունների օգտագործման վերաբերյալ տեղեկատվություն լինի, պետք է հաշվի առնել նաև այդ հանգամանքը ևս, տե՛ս հաջորդ աղյուսակը):

Ֆիրմաները	Արտադրությունը, մլն տ	Իրացման ծավալը, մլն տ	Ֆիրմայի բաժինը շուկայում, տոկոս
N1	25	22,5	16,5
N2	30	27	19,8
N3	45	40,5	29,7
N4	15	13,5	9,9
N5	20	18	13,2
N6	10	10	7,3
N7	5	5	3,6
Ընդամենը		136,5	100

Պոտենցիալը՝ N6 ֆիրմա + N7 ֆիրմա=7,3+3,6=10,9 տոկոս, փոքր է 15 տոկոսից:

Պատասխան՝ Եվրահանձնաժողովը կթույլատրի միաձուլումը:

### Օրինակ 5

Սպիրտի արտադրությանը և իրացմանը զբաղված ՀՀ ֆիրմաների 2015 թ. Տնտեսական գործունեության որոշ ցուցանիշներ բերված են աղյուսակում.

Ֆիրմաների անվանումը	Սպիրտի արտադրության ծավալները, հազ.դ.լ	Արտադրված սպիրտը	
		օգտագործվել է օդու սեփական արտադրության մեջ, հազ.դ.լ *	իրացվել է շուկայում, հազ.դ.լ
Ա	1200	600	
Բ	1400		800
Գ	1600	600	
Դ	2000		800
Ե	1600	800	
Զ	2500		1000
Է	1000		300
Ը	1500		600
Թ	2200	1000	
Ժ	2000		700

\* Ֆիրմաների օդու սեփական արտադրանքներում օգտագործվել են պահանջ-վող սպիրտի առավելագույն քանակությունները և 1 և սպիրտից ստացվում է 2 և օղի: Արտադրված սպիրտը և օղին իրացվել են ամբողջությամբ:

«Բ» և «Դ» ֆիրմաները ցանկանում են միաձուլվելու միջոցով վերակազմակերպվել: Հանձնաժողովը թույլատրելու<sup>օ</sup> է միաձուլումը, թե՞ ոչ:

### Լուծում

Խնդիրը կազմված է բիզնես կատարելու տրամաբանության հիման վրա: Եթե մի ֆիրմա զբաղվում է տեխնոլոգիապես միմյանց կապված երկու գործունեությամբ (ինքն իր ֆիրմայի համար

հանդես է գալիս որպես մատակարար), ապա սկզբից իր ֆիրմայի ամբողջ պահանջարկը կբավարարի, դրանից հետո մնացածը կիրացնի շուկայում: Ելնելով այդ տրամաբանությունից՝ լրացնենք աղյուսակի բաց թողնված ցուցանիշները:

Ֆիրմաների անվանումը	Սպիրտի արտադրության ծավալները, հազ.դ.լ	Արտադրված սպիրտը	
		օգտագործվել է օդու սեփական արտադրության մեջ, հազ.դ.լ *	իրացվել է շուկայում, հազ.դ.լ
Ա	1200	600	600
Բ	1400	600	800
Գ	1600	600	1000
Դ	2000	1200	800
Ե	1600	800	800
Զ	2500	1500	1000
Է	1000	700	300
Ը	1500	900	600
Թ	2200	1000	1200
Ժ	2000	1300	700

Նախ դիտարկենք սպիրտի, այնուհետև՝ օդու շուկան:

Ֆիրմաների անվանումը	Արտադրված սպիրտը		Ֆիրմայի բաժինը սպիրտի շուկայում, տոկոս.	Օդու արտադր. ծավալը, հազ. դլ	Ֆիրմայի բաժինը օդու շուկայում, տոկոս
	օգտագործվել է օդու սեփական արտադրության մեջ, հազ.դ.լ *	իրացվել է շուկայում, հազ.դ.լ			
Ա	600	600	7,7	1200	7,1
Բ	600	800	<b>10,3</b>	1200	<b>7,1</b>
Գ	600	1000	12,8	1200	7,1
Դ	1200	800	<b>10,3</b>	2400	<b>14,2</b>
Ե	800	800	10,3	1600	9,5
Զ	1500	1000	12,8	1500	8,9
Է	700	300	3,8	1400	8,3
Ը	900	600	7,7	1800	10,7
Թ	1000	1200	15,3	2000	11,8
Ժ	1300	700	9,0	2600	15,3
Ընդամենը		7800	100	16900	100

Միաձուլման հետևանքով կառաջանա նոր ֆիրմա (Բ+Գ), որի բաժինը սպիրտի շուկայում կլինի 20,6 տոկոս, օդու շուկայում՝ 21,3 տոկոս: Երկու ցուցանիշն էլ փոքր են 1/3-ից (չի հանգեցնի գերիշխող դիրքի): Հարկավոր է դիտարկել նաև համատեղ գերիշխելու հնարավորությունը (երբ երկու ֆիրմայի համատեղ բաժինը առնվազն 1/2 է, երեքինը՝ առնվազն 2/3):

Սպիրտի շուկայում (Բ+Գ) + Թ = 20,3+15,3 = 35,6 և (Բ+Գ) + Թ + Գ = 20,3+15,3+12,8 = 48,4: Օդու շուկայում կլինի՝ (Բ+Գ) + Թ = 21,3+15,3 = 36,6 և (Բ+Գ) + Թ + Գ = 21,3+15,3+11,8 = 48,4: Ինչպես տեսնում ենք, միաձուլման հետևանքով ոչ սպիրտի շուկայում, ոչ էլ օդու շուկայում գերիշխող դիրք ունեցող ֆիրմա չի առաջանա:

Պատասխան՝ Հանձնաժողովը կթույլատրի ֆիրմաների միաձուլումը:

## **ԹԵՍՏԵՐ և ԽՆԴԻՐՆԵՐ**

### **Թեստ 1**

Տնտեսական համակենտրոնացումը.

ա) ֆիրմաների միաձուլումն է, բ) ֆիրմաների միացումն է (կլանումը), ակտիվների (այդ թվում՝ բաժինների) ձեռքբերումն է, դ) բոլոր տարբերակներն էլ ճիշտ են:

### **Թեստ 2**

«Մեղմ» օլիգոպոլիայի դեպքում մի քանի (6-7) ֆիրմաներ տնօրինում են շուկայի.

ա) 70-80 տոկոսը բ) 100 տոկոսը, գ) 50 տոկոսը դ) 50-ից 70 տոկոսը:

### **Թեստ 3**

«Կոշտ օլիգոպոլիան» այն է, երբ.

ա) 6-7 սուբյեկտ տնօրինում են շուկայի 70-80 տոկոսը, բ) ամբողջ շուկան իշխում են մոտավոր հավասար բաժիններով մի քանի (օրինակ, 2-3 կամ 4-5) տնտեսվարող սուբյեկտ, գ) շուկայում գործում են 2-3 տնտեսվարող սուբյեկտ, դ) շուկայի մասնակիցների թիվը 7-ից ավել չէ:

### **Թեստ 4**

Լերների ինդեքսի գրոյական մեծությունը վկայում է, որ. ա) շուկան մոնոպոլ է, բ) մոնոպսոն մրցակցային է, գ) օլիգոպոլ է, դ) ազատ մրցակցային է:

### **Թեստ 5**

Որո՞նք են ապրանքային շուկայի համակենտրոնացման գնահատման առավել կիրառական ցուցանիշները.

ա) համակենտրոնացման գործակիցը, բ) Լերների ինդեքսը, գ) Լինդի ինդեքսը, դ) համակենտրոնացման գործակիցը և Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսը:

### **Թեստ 6**

Ըստ համակենտրոնացման մակարդակի ինչպես են դասակարգվում ապրանքային շուկաները.

ա) Ցածր համակենտրոնացված, բ) միջին համակենտրոնացված, գ) բարձր համակենտրոնացված, դ) բոլորն էլ ճիշտ են:

### **Թեստ 7**

Հայաստանում օրենսդրությամբ ընդունված որ ցուցանիշն է համակենտրոնացման մակարդակը բնութագրող.

ա) Համակենտրոնացման գործակիցը, բ) Հերֆեհոլ-Հիրշմանի ինդեքսը, գ) Լերների ինդեքսը, դ) թվարկածներից ոչ մեկը:

### **Թեստ 8**

Որն է բոլոր մասնակիցների համար տնտեսական համակենտրոնացումների հայտարարման շեմը Եվրամիությունում.

ա) 10 մլրդ եվրո, բ) 7 մլրդ եվրո, գ) 5 մլրդ եվրո, դ) ոչ մեկն էլ ճիշտ չէ:

### **Թեստ 9**

Իրավասու է Եվրահանձնաժողովը քննարկել ԵՄ առանձին երկրներում տնտեսական համակենտրոնացման դեպքերը.

ա) այո, բ) ոչ, գ) հատուկ դեպքերում, դ) ճիշտ են ա-ն և գ-ն:

### **Թեստ 10**

Որո՞նք են տնտեսական համակենտրոնացման հանգեցնող գործարքները Հայաստանում.

ա) միաձուլումները, բ) միացումները, գ) ակտիվների (այդ թվում՝ բաժնետոմսերի) ձեռքբերումները, դ) թվարկած բոլորը:

### **Թեստ 11**

*Թվարկածներից*, ըստ ակտիվների ընդհանուր արժեքի, ո՞րն է հորիզոնական համակենտրոնացման դեպքում բոլոր մասնակիցների համար հայտարարման նվազագույն շեմի մեծությունը Հայաստանում.

ա) 1 մլրդ դրամ, բ) հինգ հարյուր միլիոն դրամ, գ) երեք հարյուր միլիոն դրամ, դ) ոչ մեկն էլ ճիշտ չէ:

### **Թեստ 12**

*Թվարկածներից*, ըստ համախառն հասույթի, ո՞րն է ուղղահայաց կամ խառը համակենտրոնացման դեպքում բոլոր մասնակիցների համար հայտարարման նվազագույն շեմի մեծությունը.



ա) 3 մլրդ դրամ, բ) հինգ հարյուր միլիոն դրամ, գ) մեկ մլրդ դրամ, դ) ոչ մեկն էլ ճիշտ չէ:

### **Թեստ 13**

*Թվարկածներից ո՞րն է ճիշտ:*

Համակենտրոնացումը չհայտարարագրելը կամ արգելված համակենտրոնացումը գործողության մեջ դնելը առաջացնում է տուգանքի նշանակում.

ա) նախորդ տարվա հասույթի չորս տոկոսի չափով, բ) ոչ ավել հինգ հարյուր միլիոն դրամից, գ) նախորդ տարվա հասույթի երկու տոկոսի չափով, դ) ոչ ավել հարյուր միլիոն դրամից:

### **Թեստ 14**

Ղազախստանի օրենքում տնտեսական համակենտրոնացումները տարբերակված են ըստ հետևյալ տեսակների. ա) հորիզոնական, բ) ուղղահայաց և խառը, գ) ճիշտ են ա-ն և բ-ն, դ) ոչ մեկն էլ ճիշտ չէ:

*Թվարկածներից ո՞րն է ճիշտ:*

### **Թեստ 15**

Բելոռուսի Հանրապետությունում տնտեսավարող սուբյեկտների վերակազմակերպումները տեղի են ունենում կարգավորող պետական մարմնի թույլտվությամբ, եթե.

ա) դրա մասնակիցներից որևէ մեկը գերիշխող դիրք ունի, բ) քվեարկող բաժնետոմսերի ձեռքբերման դեպքում, եթե դրանց համատեղ բաժինը կանոնադրական կապիտալում առնվազն 25 տոկոս է, գ) վերակազմակերպվող կամ ստեղծվող կազմակերպությունների ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է բազային մեծության հարյուր 1000-ապատիկը, դ) բոլորն էլ ճիշտ են:

*Թվարկածներից ո՞րն է ճիշտ:*

### **Թեստ 16**

Բելոռուսի Հանրապետության օրենսդրությամբ գերիշխող դիրք է, եթե սուբյեկտը շուկայում ունի. ա) առնվազն 35 տոկոս բաժին, բ) երկու խոշոր սուբյեկտների համատեղ բաժինը առնվազն 50 տոկոս է, գ) երեք խոշորինը՝ առնվազն 78 տոկոս է:

*Թվարկածներից ո՞րն է ճիշտ:*

### **Թեստ 17**

Գլազախաստանի օրենսդրությամբ սուբյեկտը գերիշխող դիրք ունեցող չի համարվի, եթե նրա բաժինը չի գերազանցի.

ա) 5 տոկոսը, բ) 10 տոկոսը, գ) 15 տոկոսը, դ) ոչ մեկն էլ ճիշտ չէ:  
*Թվարկածներից ո՞րն է ճիշտ:*

### **Թեստ 18**

Գրողատանի հակամենաշնորհային օրենսդրությամբ Կարգավորողի նախնական համաձայնություն է պետք.

ա) որոշակի ապրանքային շուկայում առնվազն 35 տոկոս բաժին ունեցող սուբյեկտների կողմից նույն շուկայի այլ սուբյեկտների բաժինների ձեռքբերումը, բ) որևէ սուբյեկտի կողմից նույն շուկայի այլ սուբյեկտի առնվազն 15 տոկոս բաժնի ձեռքբերումը, գ) որևէ սուբյեկտի կողմից այլ շուկայի սուբյեկտի առնվազն 35 տոկոս բաժնի ձեռքբերումը, դ) ոչ մեկն էլ ճիշտ չէ:  
*Թվարկածներից ո՞րն է ճիշտ:*

### **Թեստ 19**

Գրողատանի օրենքում տնտեսական համակենտրոնացումները տարբերակված են ըստ հետևյալ տեսակների. ա) հորիզոնական, բ) ուղղահայաց և խառը, գ) ճիշտ են ա-ն և բ-ն, դ) ոչ մեկն էլ ճիշտ չէ:

*Թվարկածներից ո՞րն է ճիշտ:*

### **Թեստ 20**

Ռուսաստանի Դաշնության մրցակցության պաշտպանության օրենքի համաձայն տնտեսական համակենտրոնացման նկատմամբ պետական հսկողություն է սահմանվում.

ա) առնվազն երեք մլրդ ռուբլու նյութական և ոչ նյութական ակտիվների և ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի ձեռքբերման գործարքների, բ) առնվազն մեկ մլրդ ռուբլու նյութական և ոչ նյութական ակտիվների և ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի ձեռքբերման գործարքների, գ) առնվազն յոթ մլրդ ռուբլու նյութական և ոչ նյութական ակտիվների և ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի ձեռքբերման գործարքների, դ) ոչ մեկն էլ ճիշտ չէ:

*Թվարկածներից ո՞րն է ճիշտ:*

### **Թեստ 21**

Ռուսաստանի Դաշնային հակամենաշնորհային ծառայության նախնական համաձայնությունն անհրաժեշտ է առևտրային կազմակերպությունների (բացառությամբ ֆինանսական) միաձուլումների և միացումների դեպքում, եթե դրանց ակտիվների գումարային արժեքը միջնորդագրի ներկայացման նախորդող վերջին հաշվետու ամսաթվի հաշվապահական հաշվեկշռով գերազանցել է. ա) մեկ մլրդ ռուբլին, բ) 3 մլրդ ռուբլին, գ) յոթ մլրդ ռուբլին, դ) 10 մլրդ ռուբլին:

*Թվարկածներից ո՞րն է ճիշտ:*

### **Թեստ 22**

Ռուսաստանի Դաշնային հակամենաշնորհային ծառայության նախնական համաձայնությունն անհրաժեշտ է առևտրային կազմակերպությունների (բացառությամբ ֆինանսական) միաձուլումների և միացումների դեպքում, եթե դրանց համախառն հասույթների գումարային արժեքը միջնորդագրի ներկայացմանը նախորդող վերջին հաշվետու ամսաթվի հաշվապահական հաշվեկշռով գերազանցել է՝ ա) մեկ մլրդ ռուբլին, բ) 3 մլրդ ռուբլին, գ) յոթ մլրդ ռուբլին, դ) 10 մլրդ ռուբլին:

*Թվարկածներից ո՞րն է ճիշտ:*

### **Թեստ 23**

ՌԴ օրենսդրությամբ սուբյեկտը համատեղ գերիշխող դիրք ունեցող չի համարվի, եթե նրա բաժինը չի գերազանցում շուկայի՝ ա) 5 տոկոսը, բ) 8 տոկոսը, գ) 10 տոկոսը, դ) 15 տոկոսը:

*Թվարկածներից ո՞րն է ճիշտ:*

### Խնդիր 1

Ազոտական պարարտանյութի շուկայում ֆիրմաների իրացման ծավալները բնութագրվում են աղյուսակում բերված ցուցանիշներով.

Ֆիրմաներ	Իրացման ծավալը, հազ.տ
Ա	10
Բ	8
Գ	9
Դ	12
Ե	14
Զ	15
Է	11
Ը	13

Հաշվել համակենտրոնացման գործակիցը և Հերֆեդալ-Հիրշմանի ինդեքսը:

### Խնդիր 2

Քլորոպրենային կաուչուկի շուկայում ֆիրմաների իրացման ծավալները բնութագրվում են հետևյալ ցուցանիշներով.

Ֆիրմաներ	Իրացման ծավալը, հազ.տ
Ա	100
Բ	104
Գ	106
Դ	108
Ե	110
Զ	112
Է	105
Ը	115

Որոշել շուկայի համակենտրոնացման մակարդակը:

### Խնդիր 3

Ցորենի շուկայում ֆիրմաների իրացման ծավալները բնութագրվում են հետևյալ ցուցանիշներով.

Ֆիրմաներ	Իրացման ծավալը, հազ.տ
Ա	90
Բ	92
Գ	94
Դ	96
Ե	91
Զ	93
Է	95
Ը	90

Հաշվել համակենտրոնացման գործակիցը և Հերֆեհդալ-Հիրշմանի ինդեքսը: Ինչպիսի՞ն է շուկայի համակենտրոնացման մակարդակը:

#### Խնդիր 4

Բելառուսի ցորենի շուկայում ֆիրմաների իրացման ծավալները բնութագրվում են հետևյալ ցուցանիշներով.

Ֆիրմաներ	Իրացման ծավալը, հազ.տ
Ա	100
Բ	120
Գ	110
Դ	125
Ե	130
Զ	135

Հաշվել համակենտրոնացման գործակիցը և Հերֆեհդալ-Հիրշմանի ինդեքսը: Ինչպիսի՞ն է շուկայի համակենտրոնացման մակարդակը:

#### Խնդիր 5

Գրղզստանի շաքարավազի շուկայում ֆիրմաների իրացման ծավալները բնութագրվում են հետևյալ ցուցանիշներով.

Ֆիրմաներ	Իրացման ծավալը, հազ.տ
Ա	100
Բ	105
Գ	110
Դ	115
Ե	120
Զ	150

Հաշվել համակենտրոնացման գործակիցը և Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսը: Ինչպիսի՞ն է շուկայի համակենտրոնացման մակարդակը:

### Խնդիր 6

Ղազախաստանի ագոտական պարարտանյութի շուկայում ֆիրմաների իրացման ծավալները բնութագրվում են հետևյալ ցուցանիշներով.

Ֆիրմաներ	Իրացման ծավալը, հազ.տ
Ա	100
Բ	105
Գ	108
Դ	110
Ե	112
Զ	120
Է	135
Ը	140

Հաշվել համակենտրոնացման գործակիցը և Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսը:

### Խնդիր 7

ԱՄՆ-ի «Շաքարավազ» ապրանքային շուկայի ֆիրմաների 2000 և 2014 թվականների արտադրության և ներմուծման ծավալները բնութագրվում են հետևյալ ցուցանիշներով.

Ֆիրմաներ	Արտադրության ծավալը, մլն տ		Ներմուծման ծավալը, մլն տ	
	2000 թ.	2014 թ.	2000 թ.	2014 թ.
N1	1500	1600	–	–
N2	1000		–	–
N3	1200			
N4	–	–	1600	1800
N5	–	–	1500	2000

Ինչպես է փոխվել շուկայի համակենտրոնացման աստիճանը, եթե արտադրող ֆիրմաներն իրացրել են արտադրանքի 80 տոկոսը, ներմուծողները՝ ներմուծման ծավալի 90 տոկոսը, իսկ N2 և N3 ֆիրմաներում աշխատողների միջին ցուցակային թվի անփոփոխ լինելու դեպքում աշխատանքի արտադրողականությունն աճել է 1.2 անգամ:

### Խնդիր 8

«Շաքարավազ» ապրանքային շուկայի ֆիրմաների 2000 և 2014 թվականների արտադրության ծավալները բնութագրվում են հետևյալ ցուցանիշներով.

Ֆիրմաներ	Արտադրության ծավալը, հազ. տ	
	2000 թ.	2014 թ.
N1	1600	1600
N2	1200	1500
N3	1000	
N4	1500	1800
N5	1500	2000

Ինչպե՞ս է փոխվել շուկայի համակենտրոնացման աստիճանը, եթե կենտ համարի ֆիրմաներն իրացրել են արտադրանքի 80 տոկոսը, զույգ համարների՝ 90 տոկոսը, իսկ N3 ֆիրմայում աշխատողների միջին ցուցակային թվի անփոփոխ լինելու դեպքում աշխատանքի արտադրողականությունն աճել է մեկ հինգերորդով:

### Խնդիր 9

«Շաքարավազ» ապրանքային շուկայի ֆիրմաների 2000 և 2010 թթ.արտադրությանն ներմուծման ծավալները բնութագրվում են հետևյալ ցուցանիշներով.

Ֆիրմաներ	Արտադրության ծավալը, հազ.տ		Ներմուծման ծավալը, հազ.տ	
	2000թ.	2010 թ.	2000	2010 թ.
N1	15.0	16.0		
N2	12,0			
N3	10,0			
N4	-		15,0	18,0
N5	-	-	15,0	20,0

Ինչպե՞ս է փոփոխվել շուկայի համակենտրոնացման աստիճանը, եթե արտադրող ֆիրմաներն իրացրել են արտադրանքի 80 տոկոսը, ներմուծողները՝ ներմուծման 90 տոկոսը, իսկ N2 և N3 ֆիրմաներում աշխատողների միջին ցուցակային թվի անփոփոխ լինելու դեպքում աշխատանքի արտադրողականություններն աճել են 1.1 անգամ:

### Խնդիր 10

Յորենի արտադրության, ներմուծման և իրացման մի քանի ցուցանիշի փոփոխությունները ներկայացվել են ստորև.

Ֆիրմաներ	Արտ-ն ծավալը, հազ.տ		Նեմ-ն ծավալը, հազ.տ		Իրացման գործակիցը	
	2000թ.	2013թ.	2000թ.	2013թ.	2000թ.	2013թ.
Ա	100				0.8	0.9
Բ	80				0.8	0.8
Գ	90				0.9	0.8
Դ			120		0.8	0.9
Ե			110		0.9	0.9

Ինչպե՞ս են փոփոխվել համակենտրոնացման գործակիցը և Հերֆեմդալ-Հիրշմանի ինդեքսը, եթե արտադրող ֆիրմաներում աշխատանքի արտադրողականություններն աճել են 10 տոկոսով, իսկ ներմուծման ծավալները մնացել են նույնը:

### Խնդիր 11

«Շաքարավազ» ապրանքային շուկայի ֆիրմաների 2000 և 2014 թթ. արտադրության և ներմուծման ծավալները բնութագրվում են հետևյալ ցուցանիշներով.

Ֆիրմաներ	Արտադրության ծավալը, մլն տ		Ներմուծման ծավալը, մլն տ	
	2000 թ.	2014 թ.	2000 թ.	2014 թ.
N1	1500	1600	–	–
N2	1000		–	–
N3	1200		–	–
N4	–	–	1600	1800
N5	–	–	1500	2000



Ինչպե՞ս է փոխվել շուկայի համակենտրոնացման աստիճանը, եթե արտադրող ֆիրմաներն իրացրել են արտադրանքի 80 տոկոսը, ներմուծողները՝ ներմուծման ծավալի 90 տոկոսը, իսկ N2 և N3 ֆիրմաներում աշխատողների միջին ցուցակային թվի անփոփոխ լինելու դեպքում աշխատանքի արտադրողականություններն աճել են 20 տոկոսով:

### Խնդիր 12

«Կաթ» ապրանքային շուկայի մասնակիցների արտադրական կարողության 2000 և 2014 թվականների մի քանի ցուցանիշ ներկայացվել են աղյուսակում:

Ֆիրմաներ	Արտադրական կարողությունը, հազ.լ		Արտադրական կարողության օգտ. գործակից	
	2000 թ.	2014 թ.	2000թ.	2014թ.
N1	1500	1600	0.8	0.9
N2	1200	1000	0.9	0.9
N3	1200		0.8	0.9
N4	1500	1600	0.9	0.9
N5	1600	1800	0.8	0.8
N6	1400		0.9	0.8

Ինչպե՞ս է փոփոխվել շուկայի համակենտրոնացման աստիճանը, եթե կենտ համարի ֆիրմաներն իրացրել են արտադրանքի 80, զույգը՝ 90 տոկոսը, իսկ N6 և N3 ֆիրմաներում աշխատողների միջին ցուցակային թվի անփոփոխ լինելու դեպքում աշխատանքի արտադրողականություններն աճել են մեկ հինգերորդով:

### Խնդիր 13

Հանքային ջրի արտադրության և իրացման ծավալները 2000 և 2014 թվականներին բնութագրվում են հետևյալ կերպ.

Ֆիրմաներ	Արտադրանքի ծավալը, հազ. շիշ		Իրացման ծավալը, հազ. շիշ	
	2014թ.	2000թ.	2014թ..	2000թ.
<b>Արտադրող ֆիրմաներ</b>				
N1	1200	1600		
N2	800	600		
N3	400	500		
<b>Առևտրամիջնորդ ֆիրմաներ</b>				
N 4	-	-	900	800
N 5	-	-	400	500

Հաշվել հանքային ջրի շուկայում 2000 և 2014 թվականներին համակենտրոնացման գործակիցը և Հերֆեմդալ-Հիրշմանի ինդեքսը, եթե կենտ համարի արտադրող ֆիրմաներն իրացրել են արտադրանքի 80 տոկոսը, զույգ համարներինը՝ 90:

#### **Խնդիր 14**

Հանքային ջրի արտադրության և իրացման ծավալները 2005 և 1998 թվականներին ըստ ֆիրմաների բնութագրվում են հետևյալ ցուցանիշներով.

Տնտեսավարող սուբյեկտներ	Արտադրանքի ծավալը, հազ. շիշ		Իրացման ծավալը, հազ. շիշ	
	1998 թ.	2005 թ.	1998 թ.	2005 թ.
<b>Արտադրող ֆիրմաներ</b>				
N1	1500	1800		
N2	800	600		
N3	400	500		
<b>Առևտրամիջնորդ ֆիրմաներ</b>				
N4			1000	800
N5			400	500

Հաշվել հանքային ջրի շուկայում 1998 և 2005 թվականներին համակենտրոնացման գործակիցը և Հերֆեմդալ-Հիրշմանի ինդեքսը, ինչպես նաև շուկայի համակենտրոնացման մակարդակի փոփոխությունը, եթե կենտ համարի արտադրող ֆիրմաները իրացրել են արտադրանքի 80 տոկոսը, զույգ համարներինը՝ 70:

### Խնդիր 15

Հանքային ջրի արտադրության և իրացման ծավալները 2005 և 2014 թվականներին ըստ ֆիրմաների բնութագրվում են հետևյալ ցուցանիշներով.

Տնտեսավարող սուբյեկտներ	Արտադրանքի ծավալը, հազ. շիշ		Իրացման ծավալը, հազ. շիշ	
	2005թ.	2014թ.	2005թ.	2014թ.
<b>Արտադրող ֆիրմաներ</b>				
N1	1200	1600		
N2	800	600		
N3	400	500		
<b>Առևտրամիջնորդ ֆիրմաներ</b>				
N4			900	800
N5			400	500

Հաշվել հանքային ջրի շուկայում 2014 և 2005 թվականներին համակենտրոնացման գործակիցը և Հերֆեմդալ-Հիրշմանի ինդեքսը, եթե արտադրող ֆիրմաները իրացրել են արտադրանքի 80 տոկոսը, առևտրամիջնորդ ֆիրմաները՝ 90:

### Խնդիր 16

Հանքային ջրի արտադրության և իրացման ծավալները 2005 և 2014 թվականներին ըստ ֆիրմաների բնութագրվում են հետևյալ ցուցանիշներով.

Ֆիրմաներ	Արտադրանքի ծավալը, հազ. շիշ		Իրացման ծավալը, հազ. շիշ	
	2005 թ.	2014 թ.	2005 թ.	2014 թ.
<b>Արտադրող ֆիրմաներ</b>				
N1	1400	1600		
N2	800	600		
N3	400	500		
<b>Առևտրամիջնորդ ֆիրմաներ</b>				
N6			900	1200
N7			400	500

Հաշվել հանքային ջրի շուկայում 2014թ. 2005 թ. նկատմամբ համակենտրոնացման գործակցի և Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսի փոփոխությունները, եթե արտադրող ֆիրմաներն իրացրել են արտադրանքի 80 տոկոսը:

### Խնդիր 17

Յորենի արտադրության, ներմուծման և իրացման տվյալները 2000 և 2013 թվականներին ըստ ֆիրմաների բնութագրվում են հետևյալ ցուցանիշներով.

Ֆիրմաներ	Արտ-ն ծավալը		Ներմ-ն ծավալը		իրացման գործակիցը	
	2000թ.	2013թ.	2000թ.	2013թ.	2000թ.	2013թ.
Ա	100		–		0.8	0.9
Բ		80	–		0.9	0.8
Գ		90	–		0.9	0.8
Դ	–		120		0.9	0.9
Ե	–		110		0.9	0.9

Ինչպե՞ս են փոփոխվել համակենտրոնացման գործակիցը և Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսը, եթե արտադրող ֆիրմաներում 2013թ. 2000 թ. համեմատ, աշխատողների թվի անփոփոխ լինելու պարագայում, աշխատանքի արտադրողականություններն աճել են 10 տոկոսով, իսկ ներմուծման ծավալները՝ 1.2 անգամ:

### Խնդիր 18

ԱՄՆ-ում ազոտական պարարտանյութի արտադրությանը, ներմուծմանն ու իրացմանն առնչվող տվյալները բերված են աղյուսակում.

Ֆիրմաներ	Արտ-ն ծավալը, հազ. տ		Ներմուծման ծավալը, հազ.տ		Իրացման գործակիցը	
	2000թ.	2013թ.	2000թ.	2013թ.	2000թ.	2013 թ
Ա	154				0.8	0.9
Բ		121			0.9	0.8
Գ		176			0.9	0.8
Դ	–		120		0.9	0.9
Ե	–		144		0.9	0.9

Ինչպե՞ս են փոփոխվել համակենտրոնացման գործակիցը և Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսը, եթե արտադրող ֆիրմաներում 2013թ. 2000թ. համեմատ աշխատանքի արտադրողականությունն աճել է 10, իսկ ներմուծման ծավալները՝ 20 տոկոսով:

### Խնդիր 19

Յորենի արտադրությանը, ներմուծմանն ու իրացմանն առնչվող տվյալները բերված են աղյուսակում.

Ֆիրմաներ	Արտ-ն ծավալը, հազ.տ		Ներմ. ծավալը,		իրացման գործակից	
	2000թ.	2013թ.	2000թ.	2013թ	2000թ.	2013թ
Ա	100		–		0.8	0.9
Բ		80	–		0.9	0.8
Գ		90	–		0.9	0.8
Դ	–		120		0.9	0.9
Ե	–				0.9	0.9

Ինչպե՞ս են փոփոխվել համակենտրոնացման գործակիցը և Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսը, եթե արտադրող ֆիրմաներում 2013 թ. 2000 թ. համեմատ աշխատանքի արտադրողականությունն աճել է 10, իսկ ներմուծման ծավալները՝ 20 տոկոսով:

### Խնդիր 20

Յորենի արտադրական կարողության, դրա օգտագործման գործակցի, արտադրանքի իրացման գործակցի տվյալները 2000 և 2013թթ. բերված են աղյուսակում.

Ֆիրմաներ	Արտ-կան կարող-ը, հազ. տ		Արտ-կան կարող. օգ-ն գործակիցը		իրացման գործակից	
	2000թ.	2013թ.	2000թ.	2013թ.	2000թ.	2013թ.
Ա	100	110	0.8		0.8	0.9
Բ	100			0.9	0.9	0.8
Գ	90			0.85	0.9	0.8
Դ	120		0.8		0.9	0.9
Ե	130		0.9		0.9	0.9

Ինչպե՞ս են փոփոխվել համակենտրոնացման գործակիցը և Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսը, եթե ֆիրմաներում 2013թ 2000թ. համեմատ աշխատանքի արտադրողականություններն աճել են 10 տոկոսով, իսկ արտադրական կարողության օգտագործման գործակիցները՝ 0.05 կետով:

### Խնդիր 21

Յորենի արտադրական կարողության, դրա օգտագործման գործակցի, արտադրանքի իրացման գործակցի տվյալները 2000 և 2014թթ. բերված են աղյուսակում.

Ֆիրմաներ	Արտ-կան կարող., հազ. տ		Արտ-կան կարող. օգ-ն գործակիցը		իրացման գործակից	
	2000թ.	2014թ.	2000թ.	2014թ.	2000թ.	2014թ.
Ա	110		0.95		0.8	0.9
Բ	120		0.85		0.8	0.8
Գ		120		0.85	0.8	0.8
Դ	120			0.8	0.9	0.9
Ե		132	0.9		0.9	0.9

Ինչպե՞ս են փոփոխվել համակենտրոնացման գործակիցը և Հերֆեյնդալ-Հիրշմանի ինդեքսը, եթե ֆիրմաներում 2014թ 2000-ի հետ համեմատած արտադրական կարողություններն աճել են 10 տոկոսով, իսկ արտադրական կարողության օգտագործման գործակիցները՝ 0.05 կետով:

## Խնդիր 22

Այլուրի արտադրական կարողության, դրա օգտագործման գործակցի, արտադրանքի իրացման գործակցի տվյալները 2000 և 2013թթ. բերված են աղյուսակում.

Ֆիրմաներ	Արտադր. կարողութ., հազ. տ		Արտադր. կարողութ. օգտ.գործակիցը		Իրացման գործակիցը	
	2000թ.	2013թ.	2000թ.	2013թ.	2000թ.	2013թ.
Ա	110			0.95	0.8	0.9
Բ		110		0.85	0.8	0.8
Գ	90			0.85	0.8	0.8
Դ	120		0.8		0.9	0.9
Ե		132	0.9		0.9	0.9

Ինչպե՞ս են փոփոխվել համակենտրոնացման գործակիցը և Հերֆեյնդալ-Հիրշմանի ինդեքսը, եթե ֆիրմաներում 2013 թ.2000-ի համեմատ արտադրական կարողությունն աճել է 10 տոկոսով, իսկ արտադրական կարողության օգտագործման գործակիցները՝ 0.05 կետով:

### Խնդիր 23

Սպիրտի ու օդու արտադրությամբ և իրացմամբ զբաղված ՀՀ ֆիրմաների 2014թ. տնտեսական գործունեության մի քանի ցուցանիշ բերված են աղյուսակում

Ֆիրմաների անվանումը	Սպիրտի արտադրական կարողությունը, հազ.դ.լ	Սպիրտի արտադրական կարողության օգտագործման գործակիցը	Արտադրված սպիրտը	
			օգտագործվել է օդու սեփական արտադրության մեջ, հազ.դ.լ *	իրացվել է շուկայում, հազ.դ.լ
Ա	1200	0.8	600	
Բ	1800	0.8	500	
Գ	1600	0.8	400	
Դ	2000	0,8		500
Ե	2000	0,9	600	
Զ	2500	0.6		400
Է	1000	0.9		400
Ը	1500	0.8		400
Թ	2000	0.8		600

\*Ֆիրմաների օդու սեփական արտադրանքներում օգտագործվել են պահանջվող սպիրտի առավելագույն քանակությունները և 1 լ սպիրտից ստացվում է 2 լ օղի:

«Ա» և «Դ» ֆիրմաները ցանկանում են միաձուլվելու միջոցով վերակազմակերպվել: Հանձնաժողովը թույլատրելու է միաձուլումը, թե ոչ:

### Խնդիր 24

Սպիրտի և օդու արտադրությամբ և իրացմամբ զբաղված ՀՀ ֆիրմաների 2014թ. տնտեսական գործունեության մի քանի ցուցանիշ բերված են աղյուսակում



Ֆիրմաների անվանումը	Սպիրտի արտադրության ծավալները, հազ.դ.լ	Արտադրված սպիրտը	
		օգտագործվել է օդու սեփական արտադրության մեջ, հազ.դ.լ *	իրացվել է շուկայում, հազ.դ.լ
Ա	1200	600	
Բ	1400		800
Գ	1600	600	
Դ	2000		800
Ե	1600	800	
Զ	2500		1000
Է	1000		300
Ը	1500		400
Թ	2200	1000	
Ճ	2000		600

\*Ֆիրմաների օդու սեփական արտադրանքներում օգտագործվել են պահանջ-վող սպիրտի առավելագույն քանակությունները, և 1 լ սպիրտից ստացվում է 2 լ օդի:

«Բ» և «Դ» ֆիրմաները ցանկանում են միաձուլվելու միջոցով վերակազմակերպվել: Հանձնաժողովը թույլատրելո՞ւ է միաձու-լումը, թե՞ ոչ:

### Խնդիր 25

Հիմք ընդունելով նախորդ խնդրի պայմանները՝ պարզել, թե ի՞նչ որոշում կկայացնի Հանձնաժողովը, եթե «Բ» և «Ե» ֆիրմաները ցանկանան միացման միջոցով վերակազմակերպվել:

### Խնդիր 26

Հիմք ընդունելով 24-րդ խնդրի պայմանները՝ պարզել, թե ինչ որոշում կկայացնի Հանձնաժողովը, եթե «Բ» և «Զ» ֆիրմաները ցանկանան միացման միջոցով վերակազմակերպվել:

### Խնդիր 27

Հիմք ընդունելով 24-րդ խնդրի պայմանները՝ պարզել, թե ի՞նչ որոշում կկայացնի Հանձնաժողովը, եթե «Ձ» և «Թ» ֆիրմաները ցանկանան միացման միջոցով վերակազմակերպվել:

### Խնդիր 28

Սպիրտի և օդու արտադրությամբ և իրացմամբ զբաղված ՀՀ ֆիրմաների տնտեսական գործունեության մի քանի ցուցանիշ բերված են աղյուսակում:

Ֆիրմաների անվանումը	Սպիրտի արտադրության ծավալները, հազ.դ.լ	Արտադրված սպիրտը	
		օգտագործվել է օդու սեփական արտադրության մեջ, հազ.դ.լ *	իրացվել է շուկայում, հազ.դ.լ
Ա	1200	600	
Բ	1400		800
Գ	1600	600	
Դ	2500		1000
Ե	1000		400
Զ	1500		400
Է	2000		600

\*Ֆիրմաների օդու սեփական արտադրանքներում օգտագործվել են պահանջվող սպիրտի առավելագույն քանակությունները և ֆիրմաների կողմից արտադրված օդին կազմել է օդու շուկայի 90 տոկոսը, եթե 1 լ սպիրտից ստացվում է 2 լ օդի:

«Ա» և «Դ» ֆիրմաները ցանկանում են միաձուլվել: Հանձնաժողովը թույլատրելու՞ է միաձուլումը:

### Խնդիր 29

Սպիրտի և օդու արտադրությամբ և իրացմամբ զբաղված ՀՀ ֆիրմաների 2014թ. տնտեսական գործունեության մի քանի ցուցանիշ բերված են աղյուսակում:

Ֆիրմաների անվանումը	Սպիրտի արտադրության ծավալները, հազ.դ.լ	Արտադրված սպիրտը	
		օգտագործվել է օդու սեփական արտադրության մեջ, հազ.դ.լ *	իրացվել է շուկայում, հազ.դ.լ
Ա	1500	700	
Բ	1400		700
Գ	1600	800	
Դ	1200		500
Ե	1000		400
Զ	1500		700
Է	2000		800

\* Ֆիրմաների օդու սեփական արտադրանքներում օգտագործվել են պահանջվող սպիրտի առավելագույն քանակությունները, և ֆիրմաների կողմից արտադրված օդին կազմել է օդու շուկայի 90 տոկոսը, և 1 լ սպիրտից ստացվում է 2 լ օդի:

«Ա» և «Ե» ֆիրմաները ցանկանում են միաձուլվել: Հանձնաժողովը թույլատրելու<sup>9</sup> է միաձուլումը:

### Խնդիր 30

Բելառուսի Գոմելի մարզի այլուրի ու հացի արտադրությամբ և իրացմամբ զբաղված ֆիրմաների 2014թ. տնտ. գործունեության մի քանի ցուցանիշներված են աղյուսակում:

Ֆիրմաների անվանումը	Այլուրի արտադրության ծավալները, հարյուր տ	Արտադրված այլուրը	
		օգտագործվել է հացի սեփական արտադրության մեջ	իրացվել է շուկայում
Ա	14	6	
Բ	18	10	
Գ	16	9	
Դ	13		6
Ե	12		7
Զ	15		8
Է	20		10

\* Ֆիրմաների հացի սեփական արտադրանքներում օգտագործվել են պահանջվող այլուրի առավելագույն քանակությունները, և ֆիրմաների կողմից արտադրված այլուրը կազմել է այլուրի շուկայի 90 տոկոսը, իսկ հացը՝ հացի շուկայի 80 տոկոսը: Եթե 1 կգ այլուրից ստացվում է 1.3 կգ հաց:

«Ա» և «Ե» ֆիրմաները ցանկանում են միաձուլվել: Հանձնաժողովը թույլատրելու<sup>o</sup> է միաձուլումը:

**Խնդիր 31**

Հիմք ընդունելով նախորդ խնդրի պայմանները՝ պարզել, թե ի՞նչ որոշում կընդունի Դազախստանի Հանրապետության կարգավորող մարմինը:

**Խնդիր 32**

Հիմք ընդունելով 30-րդ խնդրի պայմանները՝ պարզել, թե ի՞նչ որոշում կընդունի Կրղզստանի Հանրապետության կարգավորող մարմինը:

**Խնդիր 33**

Սպիրտի և օղու արտադրությամբ և իրացմամբ զբաղված ՀՀ ֆիրմաների 2014թ. տնտեսական գործունեության մի քանի ցուցանիշ բերված են աղյուսակում:

Ֆիրմաների անվանումը	Սպիրտի արտադրական կարողությունը, հազ.դ.լ	Սպիրտի արտադրական կարողության օգտագործման գործակից	Արտադրված սպիրտը	
			օգտագործվել է օղու սեփական արտադրության մեջ, հազ.դ.լ *	իրացվել է շուկայում, հազ.դ.լ
1	2	3	4	5
Ա	1200	0.8	600	
Բ	1800	0.8	800	
Գ	1600	0.8	400	
Դ	2500	0.6		800
Ե	2000	0.9		1000
Զ	1500	0.8		400
Է	2000	0.8		600

\* Ֆիրմաների օղու սեփական արտադրանքներում օգտագործվել են պահանջվող սպիրտի առավելագույն քանակությունները, և ֆիրմաների կողմից արտադրված օղին կազմել է օղու շուկայի 90 տոկոսը: 1 և սպիրտից ստացվում է 2 և օղի:

«Ա» և «Զ» ֆիրմաները ցանկանում են միաձուլվել. Հանձնա-  
ժողովը արդյոք թույլատրելո՞ւ է միաձուլումը:

### Խնդիր 34

Սպիրտի ու օղու արտադրությամբ և իրացմամբ զբաղված ՀՀ ֆիրմաների 2014թ. Տնտեսական գործունեության մի քանի ցուցանիշ բերված են աղյուսակում.

Ֆիրմաների անվանումը	Սպիրտի արտադրական կարողությունը, հազ.դ.լ	Սպիրտի արտադրական կարողության օգտագործման գործակիցը	Արտադրված սպիրտը	
			օգտագործվել է օղու սեփական արտադրության մեջ, հազ.դ.լ *	իրացվել է շուկայում, հազ.դ.լ
Ա	1400	0.8	600	
Բ	2200	0.8	800	
Գ	1600	0.8	400	
Դ	2500	0.7		600
Ե	2000	0.9		800
Զ	1500	0.8		600
Է	2000	0.8		600

\* Ֆիրմաների օղու սեփական արտադրանքներում օգտագործվել են պահանջվող սպիրտի առավելագույն քանակությունները, և ֆիրմաների կողմից արտադրված օղին կազմել է օղու շուկայի 90 տոկոսը, իսկ սպիրտը՝ սպիրտի շուկայի 95 տոկոսը, և 1 լ սպիրտից ստացվում է 2 լ օղի:

«Ա» և «Դ» ֆիրմաները ցանկանում են միաձուլվել: Հանձնա-  
ժողովը կթույլատրի՞ օ միաձուլումը:

### Խնդիր 35

Սպիրտի ու օղու արտադրությամբ և իրացմամբ զբաղված Ռ-Դ-Եկատերինաբուրգի մարզի ֆիրմաների 2014թ տնտեսական գործունեության մի քանի ցուցանիշ բերված են աղյուսակում:

Ֆիրմաների անվանումը	Սպիրտի արտադրական կարողությունը, հազ.դ.լ	Սպիրտի արտադրական կարողության օգտագործման գործակիցը	Արտադրված սպիրտը	
			օգտագործվել է օդու սեփական արտադրության մեջ, հազ.դ.լ *	իրացվել է շուկայում, հազ.դ.լ
Ա	1200	0.8	600	
Բ	1800	0.8	800	
Գ	1600	0.8	400	
Դ	2500	0.8		800
Ե	2000	0.9		1000
Զ	1500	0.8		400
Է	2000	0.8		600

\* Ֆիրմաների օդու սեփական արտադրանքներում օգտագործվել են պահանջվող սպիրտի առավելագույն քանակությունները, և ֆիրմաների կողմից արտադրված օդին կազմել է օդու շուկայի 90 տոկոսը, իսկ սպիրտը՝ սպիրտի շուկայի 95 տոկոսը, և 1 լ սպիրտից ստացվում է 2 լ օդի:

«Ա» և «Զ» ֆիրմաները ցանկանում են միաձուլվել. Հանձնաժողովը արդյոք թույլատրելո՞ւ է միաձուլումը:

### Խնդիր 36

Սպիրտի ու օդու արտադրությամբ և իրացմամբ զբաղված ՀՀ ֆիրմաների 2014թ. Տնտեսական գործունեության մի քանի ցուցանիշ բերված են աղյուսակում

Ֆիրմաների անվանումը	Սպիրտի արտադրական կարողությունը, հազ.դ.լ	Սպիրտի արտադրական կարողության օգտագործման գործակիցը	Արտադրված սպիրտը	
			օգտագործվել է օդու սեփական արտադրության մեջ, հազ.դ.լ *	իրացվել է շուկայում, հազ.դ.լ
1	2	3	4	5
Ա	1400	0.8	600	
Բ	2200	0.8	800	
Գ	1600	0.8	400	
Դ	2500	0.6		600
Ե	2000	0.9		800
Զ	1500	0.8		600
Է	2000	0.8		600

\*Ֆիրմաների օդու սեփական արտադրանքներում օգտագործվել են պահանջվող սպիրտի առավելագույն քանակությունները և ֆիրմաների կողմից արտադրված սպիրտը և օդին կազմել են սպիրտի և օդու շուկաների համապատասխանաբար 90 և 80 տոկոսը: Եթե 1 լ սպիրտից ստացվում է 2 լ օդի:

«Ա» և «Բ» ֆիրմաները ցանկանում են միաձուլվել. Հանձնա-  
ժողովը թույլատրելու՞ է միաձուլումը:

## ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ և ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

### Թեստեր

1. դ, 2. ա, 3. բ, 4.դ, 5.դ, 6.դ, 7.դ, 8.գ, 9. բ, 10. դ, 11. ա, 12. ա, 13. ա-ն և բ-ն, 14. դ, 15. դ, 16. ա-ն և գ-ն, 17 գ, 18. ա, 19. դ, 20. բ, 21. գ, 22. դ, 23. բ:

### Խնդիրներ

1.  $CR_3=45,7$ տոկոս,  $HHI= 1299$  միավոր:
2. Ըստ համակենտրոնացման գործակցի՝ շուկայի համակենտրոնացման մակարդակը ցածր է ( $CR_3=39,2$ տոկոս), ըստ Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսի՝ միջին մակարդակի է ( $HHI= 1252$  միավոր):
3.  $CR_3=38,5$ տոկոս,  $HHI= 1252$  միավոր: Ըստ համակենտրոնացման գործակցի՝ շուկայի համակենտրոնացման մակարդակը ցածր է, ըստ Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսի՝ միջին մակարդակի է:
4. Շուկայի համակենտրոնացումը միջին մակարդակի է ( $CR_3=54,2$  տոկոս,  $HHI=1623$  միավոր):
5. Շուկայի համակենտրոնացումը միջին մակարդակի է ( $CR_3=55$  տոկոս,  $HHI=1699$  միավոր):
6. Ըստ համակենտրոնացման գործակիցը ( $CR_3=42,5$ տոկոս), Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսը՝ միջին մակարդակի է ( $HHI= 1304$  միավոր):



7. Նկատի ունենալ, որ ԱՄՆ-ում 1982 թվականից շուկայի համակենտրոնացման մակարդակը որոշելիս համակենտրոնացման գործակցի փոխարեն հաշվարկվում է Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսը: Շուկան համարվում է բարձր համակենտրոնացված, եթե այդ ինդեքսը մեծ է 1800 միավորից: Համակենտրոնացման գործակիցը նվազել է 0.5 տոկոսային միշով, իսկ Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսն աճել է 11 միավորով:
8. Համակենտրոնացման գործակիցը մնացել է նույնը, իսկ Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսն աճել է 5 միավորով:
9. Համակենտրոնացման գործակիցը մնացել է նույնը, իսկ Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսն աճել է 27 միավորով:
10. Համակենտրոնացման գործակիցը նվազել է 0.4 տոկոսային միշով, իսկ Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսն աճել է 4 միավորով:
11. ( $CR_3$ -ը 71.5 տոկոսից դարձել է 71.0 տոկոս), իսկ Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսն աճել է 11 միավորով 2121 միավորից դարձել է 2132 միավոր):
12. **Ցուցում:** Արտադրության ծավալները հաշվել՝ ելնելով արտադրական կարողությունների օգտագործման գործակիցներից: Համակենտրոնացման գործակիցը նվազել է 0.2 տոկոսային միշով, իսկ Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսը՝ 2 միավորով:
13.  $CR_3^{2000} = 78,8$  տոկոս,  $CR_3^{2014} = 74,4$  տոկոս,  $HHI^{2000} = 2335$  միավոր,  $HHI^{2014} = 2406$  միավոր:
14.  $CR_3^{2000} = 79.1$  տոկոս,  $CR_3^{2014} = 77.0$  տոկոս,  $HHI^{2000} = 2417$  միավոր,  $HHI^{2014} = 2497$  միավոր:
15.  $CR_3^{1998} = 79.3$  տոկոս,  $CR_3^{2005} = 76.9$  տոկոս,  $HHI^{1998} = 2490$  միավոր,  $HHI^{2005} = 2601$  միավոր:
16. Համակենտրոնացման գործակիցը նվազել է 3.2 տոկոսային միշով, Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսն աճել է 118 միավորով:

17. **Ցուցում:** Նախ, լրացնենք աղյուսակում բաց թողնված տվյալները՝ հաշվի առնելով աշխատանքի արտադրողականության 10 և ներմուծման՝ 20 տոկոս աճերի տվյալները: Այնուհետև, հաշվարկենք շուկայի ծավալները 2000 և 2013 թվականների համար՝ հաշվի առնելով իրացման գործակիցները:  
Պատասխան՝ Համակենտրոնացման գործակիցն աճել է 4.5 տոկոսային նիշով, իսկ Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսը՝ 70 միավորով:
18. Համակենտրոնացման գործակիցն աճել է 0.9 տոկոսային նիշով, Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսը՝ նվազել 4 միավորով:
19. Համակենտրոնացման գործակիցն աճել է 2.3 տոկոսային նիշով, Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսը՝ 25 միավորով:
20. Համակենտրոնացման գործակիցն աճել է 5.3 տոկոսային նիշով, Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսը՝ 34 միավորով:
21. Համակենտրոնացման գործակիցը նվազել է 0.5 տոկոսային նիշով, Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսը՝ 7 միավորով:
22. Համակենտրոնացման գործակիցն աճել է 0.7 տոկոսային նիշով, Հերֆենդալ-Հիրշմանի ինդեքսը նվազել՝ 3 միավորով:
23. **Ցուցում:** Նախ, դիտարկվում է սպիրտի և օղու շուկաներում միաձուլման հետևանքով փաստացի վիճակը: Այնուհետև հաշվի է առնվելու պոտենցիալ հնարավորությունը (միաձուլվող ֆիրմաների արտադրական կարողության օգտագործման գործակիցն ընդունվում է 100 տոկոս):  
**Պատասխան՝** թույլատրում է, քանի որ գերիշխող դիրք ունեցող ֆիրմա չի առաջանում ոչ սպիրտի շուկայում, ոչ էլ՝ օղու:
24. Թույլատրում է, քանի որ գերիշխող դիրք ունեցող ֆիրմա չի առաջանում ոչ սպիրտի շուկայում, ոչ էլ՝ օղու:
25. Թույլատրում է, քանի որ գերիշխող դիրք ունեցող ֆիրմա չի առաջանում ոչ սպիրտի շուկայում, ոչ էլ՝ օղու:
26. Թույլատրում է, քանի որ գերիշխող դիրք ունեցող ֆիրմա չի առաջանում ոչ սպիրտի շուկայում, ոչ էլ՝ օղու:

27. Թույլատրում է, քանի որ գերիշխող դիրք ունեցող ֆիրմա չի առաջանում ոչ սպիրտի շուկայում, ոչ էլ՝ օդու:
28. Պատասխան՝ «Ա» և «Գ» ֆիրմաների միաձուլման հետևանքով սպիրտի շուկայում կառաջանան համատեղ գերիշխող դիրք ունեցող ֆիրմաներ: Հանձնաժողովը կարգելի միաձուլումը:
29. Թույլատրում է, քանի որ գերիշխող դիրք ունեցող ֆիրմա չի առաջանում ոչ սպիրտի շուկայում, ոչ էլ՝ օդու:
30. **Ցուցում՝** նկատի ունենալ, որ Բելոռուսի Հանրապետությունում գերիշխող դիրք է, եթե սուբյեկտը շուկայում ունի առնվազն 35 տոկոս բաժին, երկու խոշոր սուբյեկտների համատեղ բաժինը առնվազն 54 տոկոս է, երեք խոշորինը՝ առնվազն 78 և 4 խոշորի բաժինը՝ առնվազն 95 տոկոս է:  
Պատասխան՝ կարգավորող մարմինը կթույլատրի միաձուլումը, քանի որ դրա հետևանքով գերիշխող դիրք ունեցող ֆիրմա չի առաջանա:
31. **Ցուցում՝** Ղազախստանի Հանրապետության օրենսդրությամբ սպրանքային շուկայում սուբյեկտն ունի գերիշխող դիրք, եթե շուկայում ունի առնվազն 35 տոկոս բաժին, երկու կամ երեք խոշոր սուբյեկտների համատեղ բաժինը առնվազն 50 տոկոս է, և 4 խոշորի բաժինը՝ առնվազն 70 տոկոս է:  
Պատասխան՝ կարգավորող մարմինը չի թույլատրի միաձուլումը, քանի որ դրա հետևանքով կառաջանան համատեղ գերիշխող դիրք ունեցող ֆիրմաներ:
32. **Ցուցում՝** Ղրղզստանի Հանրապետության օրենսդրությամբ սպրանքային շուկայում սուբյեկտն ունի գերիշխող դիրք, եթե այն շուկայում ունի առնվազն 35 տոկոս բաժին, կամ ոչ ավել քան երեք խոշոր սուբյեկտների համատեղ բաժինը առնվազն 50 տոկոս է, և ոչ ավել քան 5 խոշոր սուբյեկտը (եթե չեն բավարարում առաջին երկու պայմաններին):  
Պատասխան՝ կարգավորող մարմինը չի թույլատրի միաձուլումը, քանի որ դրա հետևանքով կառաջանան համատեղ գերիշխող դիրք ունեցող ֆիրմաներ:

33. Թույլատրում է, քանի որ գերիշխող դիրք ունեցող ֆիրմա չի առաջանում ոչ սպիրտի շուկայում, ոչ էլ՝ օղու:
34. Յուցում՝ նկատի ունենալ, որ միաձուլվող ֆիրմաների արտադրական կարողությունները 100 տոկոս ընդունելու դեպքում պահանջարկը էլի կմնա նույնը:  
Պատասխան՝ չի թույլատրի, քանի որ միաձուլվող ֆիրմաների արտադրական կարողությունները 100 տոկոս ընդունելու դեպքում կառաջանա գերիշխող դիրք ունեցող ֆիրմա:
35. **Ցուցում՝** Ռ-Գ օրենսդրությամբ գերիշխող է համարվում այն սուբյեկտը, որի բաժինը ապրանքային շուկայում.  
- գերազանցում է 50 տոկոսը, եթե դրա հարցի քննարկման ժամանակ չպարզվի, որ այն չունի գերիշխող դիրք (չի կարող ազդել ապրանքի շրջանառության պայմանների վրա),  
- 50 տոկոսից պակաս բաժին ունեցողը, որի բաժինը մրցակիցների հետ համեմատած կայուն է:  
Գերիշխող չի համարվում այն սուբյեկտի դիրքը, որի բաժինը շուկայի ընդհանուր ծավալում պակաս է 35 տոկոսից: Ռ-Գ օրենսդրությամբ ևս համատեղ գերիշխելու դրույթ է ամրագրված:  
Համատեղ գերիշխող են համարվում խոշոր սուբյեկտներից (որոնց բաժինները առանձին-առանձին մրցակիցների բաժիններին գերազանցում է) յուրաքանչյուրը, եթե ոչ ավել քան երեք սուբյեկտի համատեղ բաժինը գերազանցում է 50 տոկոսը, ոչ ավել քան հինգ սուբյեկտի համատեղ բաժինը գերազանցում է 70 տոկոսը (սույն դրույթը չի կիրառվում, եթե սուբյեկտներից որևէ մեկի բաժինը չի գերազանցում 8 տոկոսը):  
Խնդիրը լուծելիս օգտվում ենք միայն առկա տվյալներից:  
Պատասխան՝ Ֆեդերալ հակամենաշնորհային ծառայության տարածքային մարմինը թույլ չի տա միաձուլումը, քանի որ  $(U+Q)+R+E \geq 50\%$

36. **Ցուցում**՝ դիտարկել նաև միաձուլվող ֆիրմաների արտադրական կարողությունների 100 տոկոսով օգտագործելու դեպքը: Պատասխան՝ Հանձնաժողովը կթույլատրի միաձուլումը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Договор об учреждении европейского объединения угля и стали, В кн. Документы Европейского союза, т. 1, М., 1994, с.19-94.
2. И.В. Князева, Процессы концентрации на товарных рынках и методы антимонопольного регулирования, Новосибирск, 2001, с.27.
3. Микаел Микаелян, Конкурентная политика в Армении, Проблемы теории и практики управления, Международный журнал ,2004, N3.
4. Роберт С. Пиндайк, Даниэль Л. Рабинфельд, Микроэкономика, 5-ое международное издание, СПб., 2002, с. 608.
5. Словарь терминов в области экономики производственных организаций, конкурентного права и политики, направленной на поощрение конкуренции /составлен Р.С. Хейман и Д.М. Шапиро, Париж, с. 16.
6. Экономическая энциклопедия /гл. ред. Л.И. Абалкин, М., 1999, с. 1055.
7. Е. Улымбышева. Антимонопольное регулирование в ЕС, Мировая экономика и международные отношения, 1994, N 2, с. 126.
8. Яковлев А., Статистическая оценка уровня монополизации производства, Вестник статистики, 1990, N 9.
9. Ղազինյան Ա.Գ., Եվրոպական հանձնաժողով. Իրավական կարգավիճակի հիմնահարցեր, Ե., 2003, էջ 168:
10. Միքայել Միքայելյան, Տիրուհի Հովեյան. «Տնտեսական համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության մեխանիզմների ուժեղացման անհրաժեշտությունը ՀՀ-ում», Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները ՀՀ-ում (գիտաժողովի նյութեր), Ե., 2009, էջ 226-229:
11. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 23-ի թիվ 191-Ն որոշում
12. Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը

13. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 12.04.2011 թվականի թիվ 137 օրենքը
14. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 22.02.2007 թվականի թիվ 107 օրենքը
15. <http://ec.europa.eu/comm/competition/mergers/legislation/legislation.html>

**Միքայել Վարազդատի Միքայելյան  
Գաբրիել Միքայելի Միքայելյան**  
**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ  
ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ  
ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ**  
**ՈՒսումնամեթոդական ձեռնարկ**

**Микаелян Микаел Вараздатович  
Микаелян Габриел Микаелович**

**ЭКОНОМИЧЕСКИЕ КОНЦЕНТРАЦИИ И  
ВОПРОСЫ ИХ ОЦЕНКИ И РЕГУЛИРОВАНИЯ**  
**Учебно-методическое пособие**

**Mikayel V. Mikayelyan  
Gabriel M. Mikayelyan**

**ECONOMIC CONCENTRATIONS AND METHODOLOGICAL  
ISSUES IN THE EVALUATION AND REGULATION**  
**Educational Methodical Manual**

Էջադրումը՝ Ս. Հովհաննիսյանի

Տպագրությունը՝ «Նահապետ» ՍՊԸ

Թուրք՝ օֆսեթ 80 գր.:  
Տպագրությունը՝ օֆսեթ:  
5 պլայմ. տպ. մամուլ:

Տպաքանակ՝ 200: